

1000 ՂԵՏԵՐ ՊԻՏԻ ԳԵՏԵԻՆ
ԱԶՐՊԵՅՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՄԱՆ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Ազրպեյճանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը հաղորդեց, որ շուրջ 1000 միջազգային դէտեկտիվներ են ներկայացրել 15 հին կայանային Ազրպեյճանի նախագահական ընտրություններում:

Ըստ յանձնաժողովի ներկայացուցչի, արձանագրությամբ են ԵԱՀԿի ալեյի քան 600 դիտորդներ, Երրոպական Խորհուրդի 30 և ԱՊՀի երկիրներու 30 դէտեր:

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
ازتاک جريدة يومية سياسية وأدبية - الميرة السؤولة، إيشادروويشيان
1500 L.Ո. 76րԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 182 (21524) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ
ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ
ՔՈՉԱՐԵԱՆԻ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Բարսեղյանի Ծառաթ օր ընդունեց տարբեր երկիրներ ներկայացրող ակադեմիկոսներու եւ գիտնականներու պատուիրակութիւն մը, որ Երեւան ժամանած է մասնակցելու համար Հայաստանի գիտություններու ակադեմիայի 60ամեակին նուիրուած միջոցառումներուն: Հանդիպումին ընթացքին քննարկուած են գիտություններու վերաբերող տարբեր հարցեր:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ԱՊՈՒ ՌԱԳԵՊԻ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երկ ընկերակցութեամբ Երեսփոխան Պասէլ Ֆլէյխանի մէկնեցաւ Յորդանան, ուր իբրեւ պատուոյ հիւր մասնակցեցաւ Ապտալլա Բ. Թագաւորի հովանաւորութեամբ տեղի ունեցած Յորդանանի տնտեսական համախմբումի համագումարին:

Ներկայ գտնուեցաւ նաեւ Յորդանանի վարչապետ Ալի Ապու Ռադէպ, որ իր խօսքին մէջ ներկայացուց Յորդանանի տնտեսական իրավիճակը եւ հեռանկարները:

Վարչապետ Հարիրի իր կարգին խօսեցաւ արաբական տնտեսութեան իրավիճակին եւ արաբական երկիրներու միջեւ տնտեսական յարաբերութեան մասին:

Վարչապետ Հարիրի կէսօրէ ետք հանդիպում մը ունեցաւ յորդանանցի իր պաշտօնակիցին՝ Ապու Ռադէպի հետ: Քննարկուեցան շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Պէյրութ - Ամման երկկողմանի յարաբերութիւնները:

ՆԱԽԱՐԱՐ ՍԸՄԱՀԱ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահ երկ շեշտեց միջազգային ընտանիքի կարեւոր դերակատարութիւնը՝ կասեցնելու համար իսրայէլեան բռնարարքները: Իսկ Սըմահայի ստրիւակի պաշտօնակիցը՝ Սիմէտ Հասան շեշտեց Լիբանան - Սուրիա գործակցութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը, դիտել տալով, որ երկու երկիրներուն ճակատագիրը միեւնոյնն է:

Այս յայտարարութիւնները կատարուեցան Դամասկոսի մէջ, տեղեկատուութեան մարզին յատուկ լիբանանեւստրիական միացեալ յանձնախումբի ժողովին ընթացքին, որ տեղի ունեցաւ Սըմահայի եւ Հասանի նախագահութեամբ:

Սըմահ շեշտեց, որ պատմութիւնը կը փաստէ, թէ Լիբանանն ու Սուրիան միշտ յաջողած են «պաշտպանութեան պատ» մը կառուցել օրինակներու շարքին: Իսրայէլեան բռնարարքները դէմ:

Փոխ գործակցութեան հանդիպումներու արտօն, լիբանանեւստրիական յանձնախումբին միացեալ պատուիրակութիւն մը այցելեց Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Նաժի Օթարիի:

ՍՈՒՐԻՈՅ ԿԸ ՎԵՐԱՊԱՇՏՈՒԻ ԻՍՐԱՅԵԼԻ ՇԱԿԱԴԱՐՁԵԼՈՒ ԻՐԱԴՈՒՆԵՐ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԱՄԱՍԿՈՍ

Սուրիոյ կը վերապահուի իրաւունքը՝ ամէն միջոցներով հակադարձելու Իսրայէլի կողմէ որեւէ յարձակումի, յայտարարեց արտաքին գործոց նախարարութեան բանբեր Պուշրա Քանաֆանի, մասլոյ ասուլիսի մը ընթացքին: Քանաֆանի մաղթեց, որ Իսրայէլ չկրկնէ անցեալ շաբթուան յարձակումը, որովհետեւ այդպիսի պարագայի մը Սուրիա իր ունեցած բոլոր կարելիութիւնները պիտի գործածէ հակադարձելու համար: Քանաֆանի շեշտեց, որ ինքնապաշտպանութեան իրաւունքը ճանչցուած է բոլոր երկիրներուն կողմէ:

Քանաֆանի յոյս յայտնեց նաեւ, որ շրջանին մէջ բոլոր կողմերը աշխատին խուսափելու համար յարուածութիւնը հրահրելէ, բայցեւայնպէս եթէ Իսրայէլ շարունակէ բռնարարել Սուրիոյ գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ 1973ի պատերազմի արտօնի ստորագրուած համաձայնագիրը, Դամասկոս ինքնապաշտպանութեան միջոցառումներ պիտի որդեգրէ:

Իր խօսքին մէջ Քանաֆանի խոստովանեցաւ, որ Իսրայէլի ոմբակոծած շրջանը նախապէս պաղեստինեան պիտուրական գօտի էր, որ սակայն աւելի ուշ քաղաքային կեդրոնի վերածուեցաւ ու ապա՝ ամբողջութեամբ լքուեցաւ: Բանբերը աւելցուց, որ լքուած ըլլալուն պատճառաւ զոհեր չարձանագրուեցան:

Սուրիացի պաշտօնատարը դատապարտեց նաեւ ամերիկեան Քոնկրէսին մէկ յանձնաժողովին տուած որոշումը, որ կ'ուզէ պատժամիջոցներ հաստատել Սուրիոյ դէմ, զոր կ'ամբաստանէ ահաբեկչութիւն հովանաւորելու յանցանքով: Քանաֆանի ըսաւ, որ այսպիսի որոշումի մը ետին կը կանգնին Իսրայէլի հաշտուց գործող ամերիկեան շարժումները: «Ամերիկայի մէջ սիոնական լոպիսի հաւանաբար հզօրացոյնն է աշխարհի վրայ», ընդգծեց բանբերը: Քանաֆանի պոշտացուց նաեւ, որ երկխօսութեան բացակայութիւնը Ուաշինկթընի եւ Դամասկոսի միջեւ, վերջ պիտի տայ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին:

ՍՈՒՐԻԱ ՊԵՏԷ Է ՍՏԱՆՁՆԷ ՊԱՏԱՍԽԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Սուրիացի պաշտօնատարին կատարած յայտարարութեան անմիջապէս հակադարձեց Իսրայէլը, շեշտելով, որ Դամասկոս պէտք է ստանձնէ ամբողջական պատասխանատուութիւնը եթէ շարունակէ զօրավիգ կանգնիլ ահաբեկչական կազմակերպութիւններու:

Վարչապետ Արիէլ Շարոնի գրասենեակի մէկ աղբիւրը յայտնեց, որ Իսրայէլ տրամադիր ու հակամէտ չէ յարուածութեան թափ տալով, սակայն եթէ Սուրիա չորդեգրէ միջոցառումներ, որոնք կ'արգիւն իր հողերէն Իսրայէլի դէմ յարձակումները, այն ատեն Դամասկոս պէտք է ստանձնէ պատասխանատուութիւնը եւ կրէ հետեւանքը: Իսրայէլացի պաշտօնատարը աւելցուց, որ Իսրայէլ կ'ողջունէ խաղաղութիւնը, բայցեւայնպէս կը վերապահէ ինքնապաշտպանութեան իրաւունքը:

ԿԼԵՆՏԷՅԼԻ ՔԱՂԱՔԱ ՊԵՏԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱ ՊԵՏԻՆ, Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ, ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱ ՊԵՏԱՐԱՆ ԵՒ ԱՅՆՃԱՐ



Հ.Յ.Դ. Սարդարապատ ակումբին մէջ



Վեհափառ հայրապետին մօտ

Շաբաթ, 11 Հոկտեմբեր 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդունեց Կլէնտէյի քաղաքապետ Ֆրէնք Քուէնթերն, որ օր մը առաջ Երեւանէն ժամանած էր Պէյրութ: Խօսելով Միացեալ Նահանգներու ու յատկապէս Կլէնտէյի հայ համայնքին մասին, քաղաքապետ Քուէնթերն իր գոհունակութիւնը յայտնեց կազմակերպ հայկական գաղութին բերած նպաստին ու ներդրման՝ քաղաքի համայնական կեանքին մէջ:

Վեհափառին այցելութենէն ետք քաղաքապետը

տը այցելեց «Սարդարապատ» ակումբ եւ տեսակցութիւն մը ունեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ընկերներուն հետ:

Քաղաքապետ Քուէնթերն նախ կեկուցեց Հայաստան իր ուղեւորութեան, տեղւոյն Հ. Յ. Դ. պատասխանատուներուն հետ իր ունեցած տեսակցութիւններուն եւ ապա Կլէնտէյ - Ղափան քոյր քաղաքներու համաձայնագիրի ստորագրութեան եւ գործակցութեան ծրագիրներու մասին:

Կեդրոնական Կոմիտէի ընկերներ ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեցին ընդհանրապէս լիբանանահայ գաղութին եւ յատկապէս Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի գործունէութեան մասին:

«Սարդարապատ» այցելութենէն ետք քաղաքապետ Քուէնթերն այցելեց Պուրճ Համուտի քաղաքապետարան եւ տեսակցութիւն ունեցաւ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ



Հայ դպրոցները կանգուն պահող, սերունդներ կազմաւորող ու դաստիարակող եւ մարդկութեան ու յատկապէս հայութեան համար արդիւնաւէտ սերմեր ցանող ու հնձող ուսուցիչները մեծարելու եւ պանծնք պատուելու նպատակով, Ազգային իշխանութեան ուսումնական խորհուրդի կազմակերպութեամբ եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի հովանաւորութեամբ, երէկ, Կիրակի, 12 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 7:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ հայ ուսուցիչի մեծարանքի երեկոյ:

Ուսումնական Խորհուրդի անունով ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Սարգիս Կիրակոսեան, որ ըսաւ, թէ Թարգմանչաց տօնին առիթով ուսումնական խորհուրդը փափաքած է առաջին թարգմանիչին ճամբով պատուել նոյն աւանդին պահպանները, որոնք անցեալն ու ներկան իրարու կապողներն ու հաստատ քայլերով սերունդները դէպի ապագայ առաջնորդողներն են:

Ան նշեց, թէ հայ դպրոցը քարեղէն անշունչ կառոյց մըն է, բայց ան կեանք կ'առնէ, ոգի ու աւանդ կը դառնայ հայ ուսուցիչին եւ անոր ջանքով դաստիարակութեան շնորհիւ:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Չարեհեան դպրեվանքի սաները, որոնք ներկայացուցին

«ԱԶԳԱԿ»Ի ՄՐՅԱՆՔ


Երեքշաբթի, 14 Հոկտեմբերին սկսեալ հետեւեցեք «Ազգակ»ի պատմամշակութային մրցանքին:

Մանրամասնութիւնները՝ օրին:

Շաբաթ, 12 ԷՁ

ՉՄՍԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

ՄԱԼՈՅԵԱՆ ԵՐԱՆԵԼԻ ՆԱՐԱՏԱԿԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑՈՒՄ



Երկու տարի առաջ, վատիկանի Սուրբ Պետրոս տաճարին կեղծական ճակատին վրայ հայեպիսկոպոսի մր. Չմմառու միաբան Իգնատիոս Մալոյան, հայ կաթողիկե եպիսկոպոսին պատկերը կը ցուցադրուէր աշխարհատարած քրիստոնէի հաւատարմացեալ բոլոր ազգերու ժողովուրդներուն, եւ ան կը հռչակուէր Երանելի: Լեռնայի թանի Չմմառ գիւղին հայկական վանքը՝ կառուցուած 1749ին, եղած էր անոր վարդապետարանը: Հոն ուսած էր եւ դաստիարակուած: Ան հոգեւոր կեանքի աստիճանները հոն բարձրացած էր, մինչեւ ուղարկուի առաքելութեան՝ Վանքի վայրեր, ինչպէս՝ Եգիպտոս եւ Մարտին, ուր իբրեւ եպիսկոպոս ծառայեց հայ ժողովուրդին, մատակարարելով սուրբ խորհուրդները եւ դպրոցի միջոցով եւ դաստիարակելով հայ պատանիները: 1915 Մեծ Եղեռնին, նահատակուեցաւ իր ժողովուրդին հետ:

Երկու տարի առաջ, վատիկանի Սուրբ Պետրոս տաճարին կեղծական ճակատին վրայ հայեպիսկոպոսի մր. Չմմառու միաբան Իգնատիոս Մալոյան, հայ կաթողիկե եպիսկոպոսին պատկերը կը ցուցադրուէր աշխարհատարած քրիստոնէի հաւատարմացեալ բոլոր ազգերու ժողովուրդներուն, եւ ան կը հռչակուէր Երանելի: Լեռնայի թանի Չմմառ գիւղին հայկական վանքը՝ կառուցուած 1749ին, եղած էր անոր վարդապետարանը: Հոն ուսած էր եւ դաստիարակուած: Ան հոգեւոր կեանքի աստիճանները հոն բարձրացած էր, մինչեւ ուղարկուի առաքելութեան՝ Վանքի վայրեր, ինչպէս՝ Եգիպտոս եւ Մարտին, ուր իբրեւ եպիսկոպոս ծառայեց հայ ժողովուրդին, մատակարարելով սուրբ խորհուրդները եւ դպրոցի միջոցով եւ դաստիարակելով հայ պատանիները: 1915 Մեծ Եղեռնին, նահատակուեցաւ իր ժողովուրդին հետ:

Երկու տարի առաջ, վատիկանի Սուրբ Պետրոս տաճարին կեղծական ճակատին վրայ հայեպիսկոպոսի մր. Չմմառու միաբան Իգնատիոս Մալոյան, հայ կաթողիկե եպիսկոպոսին պատկերը կը ցուցադրուէր աշխարհատարած քրիստոնէի հաւատարմացեալ բոլոր ազգերու ժողովուրդներուն, եւ ան կը հռչակուէր Երանելի: Լեռնայի թանի Չմմառ գիւղին հայկական վանքը՝ կառուցուած 1749ին, եղած էր անոր վարդապետարանը: Հոն ուսած էր եւ դաստիարակուած: Ան հոգեւոր կեանքի աստիճանները հոն բարձրացած էր, մինչեւ ուղարկուի առաքելութեան՝ Վանքի վայրեր, ինչպէս՝ Եգիպտոս եւ Մարտին, ուր իբրեւ եպիսկոպոս ծառայեց հայ ժողովուրդին, մատակարարելով սուրբ խորհուրդները եւ դպրոցի միջոցով եւ դաստիարակելով հայ պատանիները: 1915 Մեծ Եղեռնին, նահատակուեցաւ իր ժողովուրդին հետ:

Երկու տարի առաջ, վատիկանի Սուրբ Պետրոս տաճարին կեղծական ճակատին վրայ հայեպիսկոպոսի մր. Չմմառու միաբան Իգնատիոս Մալոյան, հայ կաթողիկե եպիսկոպոսին պատկերը կը ցուցադրուէր աշխարհատարած քրիստոնէի հաւատարմացեալ բոլոր ազգերու ժողովուրդներուն, եւ ան կը հռչակուէր Երանելի: Լեռնայի թանի Չմմառ գիւղին հայկական վանքը՝ կառուցուած 1749ին, եղած էր անոր վարդապետարանը: Հոն ուսած էր եւ դաստիարակուած: Ան հոգեւոր կեանքի աստիճանները հոն բարձրացած էր, մինչեւ ուղարկուի առաքելութեան՝ Վանքի վայրեր, ինչպէս՝ Եգիպտոս եւ Մարտին, ուր իբրեւ եպիսկոպոս ծառայեց հայ ժողովուրդին, մատակարարելով սուրբ խորհուրդները եւ դպրոցի միջոցով եւ դաստիարակելով հայ պատանիները: 1915 Մեծ Եղեռնին, նահատակուեցաւ իր ժողովուրդին հետ:

ՀՄՄՍԶԳԱՅԻՆԻ ՀԱՅ ԿԹՈՍԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱՆ ՄԵՌՈՒԹԻՒՆ

ԿԱՐԿԱԶ

Մանկական, պատանեկան եւ երեք - պատանեկան երգչախումբ

Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար՝ **ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ**

ՓՈՐՁԵՐՈՒ ՎԵՐՍԿՍՈՒՄ

Մանկական խումբ՝ Ա.Էն Գ. դասարանի աշակերտներ
 Ամեն Զաբաթ, կեսօրէ ետք ժամը 2:00էն 3:00
 Պատանեկան խումբ՝ 4Էն 8րդ դասարանի աշակերտներ
 Ամեն Ուրբաթ, կեսօրէ ետք ժամը 4:00էն 6:00
 եւ Զաբաթ, կեսօրէ առաջ ժամը 10:00էն 12:00
 Երեք պատանեկան խումբ՝ 9րդէն բարձր դասարանի աշակերտներ
 Ամեն Ուրբաթ, երեկոյեան ժամը 6:00էն 8:00
 Փորձերը տեղի կ'ունենան Լեւոն Զանթ Մշակութային Կեդրոնին մէջ, Բ. յարկ:

Նորեկ անդամներ կ'ընդունուին փորձերու օրերու ժամերուն, կամ՝ հեռաձայնելով 03 - 442365 թիւին:

Շնորհակալութեան խօսքը կը կարգաւորուի իր յատուկ ոճով: Հայ կաթողիկե Դամասկոսի «Քնար» երգչախումբը ազգային եւ եկեղեցական երգերն են իր կ'առնողը: Հայ կաթողիկե Դամասկոսի «Քնար» երգչախումբը ազգային եւ եկեղեցական երգերն են իր կ'առնողը: Հայ կաթողիկե Դամասկոսի «Քնար» երգչախումբը ազգային եւ եկեղեցական երգերն են իր կ'առնողը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

Տիկին Սարիամ Լաւոնեան եւ գաւակները՝ Յակոբ եւ Յովիկ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հոր՝ ՅԱՐՈՒԹԻՆԻ ՀԱՄԱՆՃԵԱՆԻ մահուան սուգին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

ՄԱՐԿՈՍԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԸՆՏԱՌՈՒԹԻՒՆԸ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից դարձան իրենց հարազատի՝ ՎԱՐԿՈՒՇԻ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ մահուան սուգին:

Հ. Բ. Ը. Մ. Հ. Ե. Ը.

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԻ

Անցնող մէկ տարուան ընթացքին, Հայաստանին մինչեւ Հայկալ եւ Հայկալին մինչեւ Միացեալ Նահանգներ տեղի ունեցան մեծարանքի ժողովրդային ձեռնարկներ՝ սփիւռքահայ վաստակաւոր գրող, հրատարակիչ եւ ազգային-հասարակական գործիչ բժիշկ Թորոս Թորանեանի ծննդեան 75ամեակին եւ գործունէութեան 55ամեակին առիթով:

Սփիւռքահայ կեանքին մէջ իր տարած հրատարակչական վիթխարի աշխատանքով իրաւաստուկ տեղ ունեցող բժիշկ Թորոս Թորանեան իր հրատարակած աւելի քան 100 հատորներով եւ Սփիւռքի թէ Հայաստանի մէջ լոյս տեսնող մանուկի օրկաններուն մէջ ստորագրած ծաւալուն յօդուածաշարքերով արդարօրէն դարձաւ հայ գիրի եւ մշակոյթի դասականներէն մէկը՝ հայրենիքի եւ Սփիւռքի տարածքին, ինչպէս ըսին երէկ, երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ տեղի ունեցած մեծարանքի հանդիսութեան խօսք առնողները:

Հ.Բ.Ը.Մ. - Հ. Ե. Ը. «Անդրանիկ» մշակութային միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած հանդիսութեան բացման խօսքը կարդաց Մարայ Մապրեան, որ իր հակիրճ խօսքին մէջ «Տեմիրճեան» կեդրոնի յարկին տակ ողջունեց ներկայութիւնը բազմավաստակ յոբելեարին:

Ապա խօսք առաւ Կարօ Արքայապետեան, որ վեր առաւ բժիշկ Թորոս Թորանեանի մատուցած յանձնառութիւնը հայ գրականութեան եւ մշակոյթին նկատմամբ: Բանախօսը մանրամասնօրէն անդրադարձաւ իր ամբողջ կեանքը հայ գրականութեան եւ մշակոյթին նուիրած բժիշկին վաստակին՝ իր հրատարակած բանաստեղծական հատորներուն, արձակ գործերուն, յուշագրութիւններուն, տպագրապաշտ էջերուն, խմբագրական եւ թարգմանական աշխատանքներուն, ինչպէս նաեւ հայ մամուլին մէջ ցրուած մեծաթիւ յօդուածներուն ընդմէջէն:

Այնուհետեւ Իգնատիոս Գալայեան դաշնակի վրայ յաջորդաբար նուագեց Աննօ Պապաճանեանին եւ Պեթրովէնէն կտորներ:

Երկրորդ խօսք առնողը եղաւ գրող եւ մտաւորական Պէպօ Սիմոնեան, որ բժիշկ Թորոս Թորանեանը նկատեց գնահատանքի արժանի գլխաւոր ՄԱՐԿ, ո'չ միայն իր կատարած անհատական հրատարակչական վիթխարի աշխատանքով, այլ նաեւ իր ունեցած ազգային-հասարակական յանձնառութեամբ: Թորոս Թորանեան եթէ ոչ գիտական իմաստով սփիւռքագէտ է, ապա էպալէս եւ խորապէս սփիւռքամասնիչ է՝ իր հրապարակախօսութեան ընդմէջէն: «Գիրքի եւ գրականութիւնը բժիշկ Թորոս Թորանեանին տարերքն են: Ինչպէս կարելի չէ ապրիլ առանց ջուրի եւ օդի, Թորանեանի համար անկարելի է ապրիլ նաեւ առանց գիրքի», նշեց Պէպօ Սիմոնեան:

Պէպօ Սիմոնեանի խօսքէն ետք Տիգրան Խաչատրեան ջութակի վրայ նուագեց «Քամանչա» եւ «Արաքս» կտորները: Արփի Բարրիեան-Աւետիքեան կարդաց Թորոս Թորանեանի «Կարօս մնացի... հայրենիքն»:

Գեղարուեստական կարճ բաժինէն ետք, Արմէն Իւրենշլեան կարդաց այս առիթով Լիբանանէն, Հայկալէն, Լիպոլոնէն եւ Միացեալ Նահանգներէն յղուած շնորհաւորական հեռագիրներ: Բեմ հրաւիրուեցաւ Նարեկ Եպս. Ալեքսանդրեան՝ յոբելեարին պարգեւատրուած կատարելու համար: Վերջինս կարդաց այս առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ստորագրած կոնդակը, որով վեհափառը յոբելեարը կը պարգեւատրէր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Շնորհակալական խօսք արտասանեց նաեւ պարգեւատրեալը, երախտագիտութիւն յայտնելով կազմակերպիչ միութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին: Հանդիսութեան արարտին Հ.Ե.Ը.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Կարօ ձղբլեան հանդիսութեան յուշատախտակը նուիրեց պարգեւատրեալին:

ԱՅՅԻԼԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՐԱՄԻՆ ՄԱՍԻՆ ԿԸ ԶԵԿՈՒՅՑ ԳՈՒՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԵՆ ՅԱԿՈՒ ԼԱՏՈՅԵԱՆ

ԱՅՅԻԼ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՔ Կ'ԵՐԿԱՐԵ ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ԲՈՒՐՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԵՐԱՆԵԼԻ

Լիբանանահայ ուսանողին ու աշակերտին ուսման նիւթական բեռը թեթեւցելու նպատակով 1998ին հիմնուած ԱՅՅԻԼ (Արմինիք) Ֆոնտ Ֆոր Հէթր Ինշուրընս Ին Լէպոնըն) 2002ին հաստատեց յատուկ հիմնադրամ մը: Ըլլալով պետական տուրքերէ վերջ հաստատութիւն մը, ԱՅՅԻԼ ունի տարեկան իր հասոյթին որոշ մէկ մասը բարեփոխական նպատակներու յատկացրելու պարտաւորութիւնը: Այս ծիրէն ներս հաստատութեան վարչութիւնը հիմնեց հայ աշակերտներու եւ համալսարանականներու համար հիմնադրամը, որ այս տարի եւս իր ծառայութիւնները կը տրամադրէ իրեն ղիմողներուն:

ԱՅՅԻԼի հիմնադրամը անցեալ ամիս ընդունեց համալսարանական ուսանողներու ղիմումնազիրները, իսկ այս օրերուն ան կ'ընդունի հայկական վարժարան յաճախող աշակերտներու ղիմումնազիրները: Այս առիթով յուսարանական վրոյց մը ունեցանք հաստատութեան տնօրէն Յակոբ Լատոյեանի հետ, որ շահեկան տեղեկութիւններ եւ մանրամասնութիւններ փոխանցեց հիմնադրամին օգտուելու կարելիութիւններուն եւ պայմաններուն մասին:

Յակոբ Լատոյեան յայտնեց, որ այս տարի հրապարակուած են համալսարանական ուսանողներու երկու հարիւր ղիմումնազիրներ, որոնցմէ պիտի ընդառաջուի միայն յիսուն ղիմումնազիրի: Այս հիմնադրամին օժանդակութիւն ստանալու համար կրնան ղիմել լիբանանեան որեւէ համալսարան յաճախող բոլոր հայ համալսարանականները, որոնք պարտին իրենց հետ բերել վերջին երկու տարիներու նիւթեր, ընդունման թուղթը, համալսարանի կրթաթղթակի հաստատագիրը եւ անձնաթուղթի յուսապատճէնը, ինչպէս նաեւ՝ երկու երաշխաւոր: Հիմնադրամին վարչութիւնը պէտք է կարենայ երաշխաւորներէն հաստատել թեկնածուին ներկայացուցած տեղեկագրի մասին:

Յակոբ Լատոյեան շեշտեց, թէ թեկնածուներու ընդունման գծով նախապատուութիւն կը տրուի այն ուսանողներուն, որոնք կու գան բազմաճիւղ, կարիքաւոր եւ կամ ուսանող այլ անդամներ ունեցող ընտանիքներէ: Ուսանողներու պտուրը առաւելագոյն չափով արդար ըլլալու համար առաջնահերթութիւն պիտի տրուի նաեւ այն անհատներուն, որոնք գործօն են հայկական որեւէ միութեան կամ կառոյցի կեանքին ներս եւ ներկայի թէ ապագայի իմաստով որոշ ներդրում կրնան ունենալ մեր ազգային հաւաքական կեանքին մէջ: Բնականաբար հիմնադրամին օգտուող ուսանողը պէտք է ունենայ գոհացուցիչ նիւթեր եւ վարք ու բարք:

ԱՅՅԻԼի աշակերտական հիմնադրամը նիւթական օժանդակութիւն կը տրամադրէ լիբանանահայ վարժարաններու նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտներուն: Այս բաժինով հրապարակուած են երեք հարիւր ղիմումնազիրներ, որոնցմէ պիտի ընդունուին հարիւր հատը: Աշակերտին ընտանիքին նիւթական վիճակը եւ անոր նիւթերը նկատի ունենալու կողմէն, այս պարագային թեկնածուներու ընտրութիւնը պիտի համադրուի նաեւ վարժարաններուն տնօրէններուն հետ: «Այդպիսի հետ իր պրոյեկտի ընթացքին Յակոբ Լատոյեան շեշտեց, թէ հիմնադրամին կրնան ղիմել հայկական բոլոր վարժարաններու աշակերտները:

ԱՅՅԻԼի ապահովագրական հաստատութիւնը իր հասոյթին մէկ մասը կը տրամադրէ նաեւ իր ապահովագրական ծառայութեան օգտուողներուն տրամադրուած սպասարկութիւնները աւելցնելու: Հաստատութիւնը հովանաւորողի դերի տակ յատկացումներ կը կատարէ նաեւ լիբանանահայ մշակութային, մարպական եւ երիտասարդական միութիւններուն: Ներկայիս հաստատութիւնը մասնագիտացած եւ որակաւոր սպասարկութիւն կը տրամադրէ իրեն ղիմած շուրջ 2500 ապահովագրեալներու, ինչպէս նաեւ՝ հիւանդանոցային ծառայութիւններու եւ այլ մարպին մէջ ուղղութեան կարիք ունեցող մեծ թիւով անհատներու: Նշենք, որ ԱՅՅԻԼի կողմէն կայ ԱՅՅԻԼ, որ իր կարգին կը մատուցէ ինքնաշարժներու եւ այլ գոյքերու ու կալուածներու ապահովագրութիւնը:

Չրոյցի արարտին Յակոբ Լատոյեան յուսարանական տակ առաւ այն կէտը, որ ԱՅՅԻԼ շահադիտական նպատակներ չի հետապնդեր: Հաստատութեան գլխաւոր շահը կը կայանայ իր ծառայութիւններէն գոյացած հասոյթը, իրարօգնութեան հասկացողութեամբ, լիբանանահայ ազգային կեանքին մէջ բարեփոխական նպատակներու իրականացման յատկացումին մէջ: Հետեւաբար, ԱՅՅԻԼի սպասարկութիւններուն ղիմող իւրաքանչիւր անհատ իր կարգին նպատած կ'ըլլայ թէ՛ ուսանողական ու աշակերտական հիմնադրամին եւ թէ լիբանանահայ կառոյցներու եւ միութիւններու ուղղուող բարեփոխական յատկացումներու ամրապնդման:

NURSING ՓՈԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ ամառած եւ միջնակարգի 9րդ դասարանը, ղիմացող կը բացուի NURSINGի ասպարէզը:

Լաւագոյն ասպարէզը, լաւագոյն վճարումով, անմիջական գործի ապահովումով:

Մեծ է պահանջը, քանի որ իւրաքանչիւր 16 բժիշկի՝ ՄԷԿ հիւանդապահուի:

ԾԱՆՕԹ... Առաջին տարուան համար պիտի ընդունուին սահմանափակ թիւով աշակերտներ:

Արձանագրութիւն՝ ամէն օր:

ՓՈԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃ... Տորա՝ հեռ. 01/251320

ՆՃՍԱՐ

ՄԻԱԲԵՒԵՆ ԱՇԽԱՐՀԻ «ԲԱՐԻՔՆԵՐ»ԷՆ

Միջերկրականի արևելեան փին վերջին շարքներու իրադարձութեանց ու անոնց ուաշինկերէնեան հակազդեցութիւններուն հետեւողը կը տարուի այն մտածումով, որ ամերիկեան պետութեան պատասխանատուներուն աշխարհագրագիտութիւնը շատ ալ տարբեր չէ իմացական կարողութեանէ կարգ մը բախտախնդիրներէ, որոնք երբեմն կ'երեւին պատկերասփիւռի այն յայտագիրներէն (Ամերիկայի մէջ թէ ալլուր), ուր բանի մը հարցումի պատասխանելով կարելի է բազմատասնեակ, մինչեւ անգամ միլիոնաւոր տուարներ շահիլ:

...Ամիսներ առաջ, երբ նման յայտագիրի մը կը հետեւէի ամերիկեան կայանէ մը, միլիոնատիրութեան բեկնածուի մը հարց տրուեցաւ հետեւեալը. էյֆէլի աշտարակը ո՛ւր կը գտնուի. հաւանական պատասխաններ՝ Ֆրանսա, Եգիպտոս, Հնդկաստան, Իրան: Թեկնածուին պատասխանը զինք դատարկաձեռն տուն դարձուց: Զարմանալի չէր, որովհետեւ ամերիկացիներուն ընդհանուր զարգացումի սահմանը յաճախ չ'անցնիր իրենց քաղաքին ու ... պատկերասփիւռի յայտագիրներուն կամ ժամանակակից (նա՛եւ ժամանակաւոր) երգիչներուն եւ աստղերուն աշխարհին սահմաններէն անդին:

Կը թուի, թէ պետական պատասխանատուներու իմացութեան սահմաններն ալ սահմանափակ են, որովհետեւ սկսած են զոհը շփոթել անիրաւին հետ ու իրենց սպանալիքներուն սլաքները այդ ուղղութեամբ կ'արձակուին: Կայ մեղմացուցիչ դէպ յանցանց մը. Իսրայէլ եւ Սուրիա իրարմէ այնքան հեռու չեն, որքան՝ Ֆրանսան եւ Հնդկաստանը...

Նորագոյն պայցոյցը կարելի է տեսնել Իսրայէլ-Սուրիա գիծին վրայ ցորգոյն գարգացումներուն հանդէպ ամերիկեան հակազդեցութեան մէջ:

Ամերիկեան խորհրդարանական յանձնախումբ մը Հինգշաբթի, 9 Հոկտեմբերին, որդեգրեց Սուրիոյ դէմ պատժամիջոցներու բանաձեւ մը, որուն խորհրդարանական տուներուն ու Սպիտակ Տան կողմէ որդեգրումը կը թուի ըլլալ պարզ ձեւակազմութիւն ու յայտնապէս կը պատրաստուի բանալ Աֆղանիստանով սկսած եւ Իրաքով շարունակուող ռազմա-մարտավարական բեմադրութեան մէկ նոր արարին վարագոյնը:

Դէպքերուն մանրամասնութիւնները ծանօթ են: Պաղեստինցի իրաւաբանուհի մը իր ընտանիքին նահատակուած անդամներուն վրէժը լուծելու համար Հոկտեմբերի առաջին շաբթափերջին անձնասպանական գործողութիւն մը կատարեց իսրայէլացիներու դէմ ու պատճառեց բազմաթիւ զոհեր ու վիրաւորներ: Մարտի իշխանութիւնը հակադարձեց Լիբանանի վաղուց ծանօթ ոնով. իսրայէլեան օդանաւեր ուժեղացուցանելու Պամակուսի մտակարար պահեստի տիրուէն գաղթական մը (Իսրայէլ առաջին անգամ ըլլալով կը բռնաբարէր 1973ի զինագուր), պատճառաբանելով, որ հոն «պաղեստինցի անհրեկիչներ» կը մարզուին: Ուաշինկերը փութաց ո՛չ միայն յայտարարելու, թէ Իսրայէլ «իրաւունք ունի ինքնապաշտպանութեան դիմելու», այլ նաեւ իսպանացի անխարժար ճեպարտութեան կանչելու Սուրիոյ ու անոր համախոհներուն ճիգերը եւ, աւելի՛ն, անհաւաստի Սուրիոյ դէմ պատժամիջոցներու նախագիծով կը պատրաստուի նոր քայլեր առնելու Իրաքով սկսած ծրագիրներուն ճամբուն վրայ: (Ի դէպ, պաղեստինցիներու հարցերն անգամ լուսանցքի վրայ կը բշտին արդէն):

* * *

Եթէ կարկինը մէջ մը աւելի լայն բանաց, կարելի է տեսնել, թէ ինչպիսի՛նա խաղիծներու կիրարկման համար դաշտ կը պատրաստուի, եւ ժամանակի ու պայմաններու ինչպիսի՛ շահագործումներ կը կատարուին Ուաշինկերի աներկբայ դաշակիցներուն կողմէ:

Յիշեալ դէպքերը մեկնաբանող լրագրող մը կը նշէր, թէ Ուաշինկերի աշտմու ընթացքը կարելի է թարգմանել հետեւեալ ձևով. «Ան, որ մեր ծրագիրներուն ընթացք չ'ուզեր տալ, մենք գայն պիտի դասեմք քշնամի, անոր անուան պիտի փակցունենք անհրեկիչի կամ անհրեկիչութեան նպատակով պիտակ ու անկէ հետք մենք գիտենք մեր ընելիքը, անկախ անկէ, թէ աշխարհը ի՛նչ կը մտածէ մեր ու մեր ընելիքներուն մասին: Եթէ անհրեկիչի մը արարքները կը համապատասխանեն մեր շահերուն, պատրաստ ենք գայն որակելու ազատութեան մարտիկ, իսկ եթէ իրաւագրկուած ժ մը պահանջատիրական պայքարը դէմ է մեր ծրագիրներուն, ան չի կրնար խուսափիլ անհրեկիչի պիտակին արժանանալէ»:

Պատմութիւնը այնքան հին է, որքան՝ «ջուրս կը պոտրես» պատճառաբանող գայլին ու «քու շուրջ վերն է» պատճառաբանող ուշխարին առակը:

Թէ ի՛նչ բանուած է Սուրիոյ (եւ այլ «քշնամի» երկիրներու) վրայ նման ճեպարտութեան բանցները մերտարութեան ետին, գաղտնի չէ: Սուրիա գաշտակից ու գործակից էր Հայր Պուշի իշխանութեան, երբ տեղի ունեցաւ Մոցի առաջին պատերազմը: Սուրիա գործակիցի վարկ կը վայելէր տակաւին բանի մը ամիս առաջ, երբ տեղի կ'ունենային Իրաքի իշխանութեան տակաման ու Իրաքի գրաւման գործողութիւնները: Սակայն Սուրիա շուտով հատկեալ Իրանի ու Հիւսիսային Փորթալի ցանկին, որովհետեւ յառնապէս համաձայն չէ շրջանին մէջ Ուաշինկերի շահերուն սանձարձակ յառաջ մղումին: Ամերիկեան մամուլը առատաձեռնօրէն Սուրիան կ'ամբաստանէ հիւլէական գեներալ արտադրութեան կարողութիւն հետապնդելու յանձնարարով, մոռնալով, որ Իրաքին ուղղուած նման վերաբերմանը ցարդ փաստի կը սպասեն, մինչդեռ Հիւսիսային Փորթալի ու ... Իսրայէլի հիւլէական գեներալ կարողութիւնը գաղտնի չէ: (Փոնկեանի ուղղութեամբ Չինաստանի «հետաքրքրութիւնը» պատճառ դարձաւ, որ այդ ուղղութեամբ ամերիկեան քարոզչական արշաւները մեղմանան շուտով):

Գաղտնիք չէ, օրինակ, որ Իրաքի հիւսիսային գօտիէն դէպի իսրայէլեան ծովափ բարիւզատար խողովակի մը վերաբացումը կը գտնուի ամերիկեան բարիւզի ընկերութեան օրակարգին վրայ: Գաղտնիք չէ, որ Իրաքէն Սուրիոյ վրայով դէպի Լիբանան երկարող բարիւզատարը եւս նոյն օրակարգին մաս կը կազմէ: Այս կետը առանձնիկն բաւարար է, որ Իսրայէլի դիմաց «կանաչ լոյս» բացուի Սուրիոյ վրայ յարձակելու, մանաւանդ որ Միացեալ Նահանգներ, Քալիֆորնիոյ նահանգապետի ընտրութեամբ, գործնական ինկած են յառաջիկայ տարուան նախագահական ընտրապայքարի ոլորապատշտին մէջ միջազգային բեմին վրայ ստեղծելով այնպիսի կացութիւն մը, որ միշտ ալ լաւագոյնս շահագործուած է դաշնակիցներուն կողմէ:

Իսրայէլի կողմէ ամերիկեան ընտրապայքարի մթնոլորտին շահագործումը մը անհայտնաբաց չէ, անկախ գործուած է նաեւ այնպիսի տարիներու, երբ Ուաշինկերի իշխանութիւնները որոշ չափով տարակարծիք եղած են Իսրայէլի հաշիւներուն, եւ սակայն «օձիքը տուած են» անոր ձեռքը (դէպ պատկերը այդպէս եղած է): Եւ հա՛ն նման «մարտավարութիւն» սկսած է խաղալ նաեւ... Թուրքիա, որ կը պատրաստուի «խաղաղարար ուժ» դրկելու անուան ցանկի իր հաշիւները հետապնդելու հիւսիսային Իրաքի մէջ, հոգ չէ թէ Ուաշինկերը կը թուի դժգու՛ր ըլլալ անոր ծրագիրներէն:

Մօտիկ անցեալին բազմաբեւո աշխարհին մէջ նման կացութիւններ ալ քան բացայայտ չէին: Հիմա իրաւագուրկ երկիրներ ու ժողովուրդներ միաբեւո աշխարհի անկեղծութեամբ ուրախանալու պատճառներ պետք է փնտռեն:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԸԱՐՔԻՆ ՆՈՐ ՄԸ ԱԻԵԼՑՆԵԼԸ ՊԵՐՃԱՆՔ ՉԷ

Ոմանք կրնան խորհիլ, որ հայկական հրապարակի խորհրդին կ'ուզենք տուրք տալ՝ Համահայկական խորհրդաժողովի առաջարկ մը ներկայացնելով: Այլեւս համասփիւռքեանը փոքր է: Բայց շատեր քմծիծաղով պիտի դիմաւորեն, եթէ այդ առաջարկը ներդրումային կամ գործարարական չըլլայ: Այս մասին պիտի չմտածէի, եթէ մեր համայնքի յարգելի անդամներէն մէկը սրտնեղած արտայայտութիւններ ունեցած չըլլար: Ան կը տառապի որ չի հասկնար Հայաստանի պատկերասփիւռի հաղորդումները, նոյնիսկ չի հասկնար Հայաստանի ներկայացուցիչները, որոնց հետ ինք ժողովներ կը գումարէ, անոնցմէ կը խնդրէ յաճախ որ տեղական արտադրութեամբ արտայայտուին: Այս հաւատարմ հայր հայերէնի դասախօս չէ, բայց հայերէն գիտէ: Կը լինեցընէ որ իր երիտասարդութեան կարողացած է նաեւ Թումանեան, Ահարոնեան, Բաֆֆի՝ ըսելու համար, որ արեւելահայերէն հասկնալու դժուարութիւն չունի, բայց չի հասկնար Հայաստանի հայերէնը: Չունի նաեւ հատուածական կամ խտրական վերաբերում:

Ինչպէս ժամանակակից մտաւորական մը կ'ըսէր, թէ՛ լեզուով միացած էինք եւ այժմ լեզուով կը բաժնուինք: Համայնքի գործունէայ անդամին արտայայտութիւնը ազգի միութեամբ տազնապող հայր անտարբեր չի կրնար լծողուլ: Արդարեւ, առարկայական մօտեցումով մը պիտի հաստատենք, որ Հայաստանի քաղաքական դեկափարներու, պատկերասփիւռի, մամուլի եւ Երեւանի փողոցներուն մէջ լուսած հայերէնը ոչ հեռուէն եւ ոչ մօտէն կ'առնչուի Բաֆֆիի, Թումանեանի, Ահարոնեանի, Տէրեանի լեզուին, քանի որ, ինչպէս յաճախ գիտել կը տրուի, գանձաւոր ազդեցութիւններու առջեւ տեղի տալով եւ վասն ստապատիք արդիականութեան, գոր կը կոչենք սնույիզմ, հայերէնը վերածուած է տեսակ մը առեւտուրի ազատ գօտիի, zone franche, ուր կը թուի, թէ՛ լեզուական ամէն ձեւի աղճատում ներելի է: Մինչդեռ առեւտուրի ազատ գօտին անդամ ունի իր օրէնքները եւ կանոնները:

Մամուլը, իր բոլոր ձեւերով, լեզուի կազմաւորման, ազնուացման, ճահճացման, աղճատման եւ յղկուելու ընթացքին մէջ ունի դրական կամ բացասական աւազդեր: Հայ մամուլի Համահայկական խորհրդաժողովի անհրաժեշտութեան մասին յաճախ խօսուած է, բայց ցարդ չէ իրականացած: Անոր գումարումը միայն օգտակար կրնայ ըլլալ, եթէ կողմնապաշտական կամ հատուածական քաղաքական նեղմտութիւններով չառաջնորդուինք: Անոր օրակարգին վրայ պէտք է արձանագրել նաեւ ժողովուրդին մատուցուող հայերէնի հարցը, քանի որ մեր լեզուն մեր միացման հասարակ յայտարար է, պատուանդանը մեր ինքնութեան: Պիտի չկրկնեմ այն, ինչ որ յաճախ լսուած է հայերէնի մէջ օտար բառերու եւ ստույթիւններու սանձարձակ ներխուժման մասին, արտասահմանի մէջ լեզուի քերականական կանոններու եւ հարաբերութեան ձեւաբանութեան, օտարաբանութիւններու կապուումի մասին, երեւոյթ մը, որուն բեմը եւ առաջնորդողը նոյնիսկ մամուլն է: Մամուլ խորհրդաժողովը, ի շարս այլ հարցերու, այս կէտը լուրջ քննութեան առարկայ պէտք է դարձնէ:

Թէ կը յաջողի՞նք նման խորհրդաժողովի մը մէջ քննել հայ մամուլի որակի եւ տարածման խնդիրները, ոչ միայն խօսելու սիրոյն, այլ՝ լուծումներու յանգելու, չեմ գիտեր: Սակայն պարզ է, որ հայկական լրատուամիջոցները տեղաբայի եւ նահանջի մէջ են, յաճախ վերածուած են տպուած թուղթի: Զանգուածը չի հետաքրքրուի այս հարցերով, տեղեակ ըլլալու պարագային՝ չի հակազդեր: Հայ թերթը, գանձաւոր պատճառներով, արդարանալի կամ անարդար, հայ ընտանիքին չ'ընկերանար, եւ այս՝ Հայաստան եւ Սփիւռք: Պատկերասփուռած հաղորդումները, որոնք այսօր կը սփռուին աշխարհի չորս կողմը, յաւելեալ որակի պատուանդան պէտք է ըլլան՝ նուազ շեշտելով արդէն արեւմտեան երկիրներու պատկերասփուռած հաղորդումներու պատճառով զարգացող կրաւորականութիւնը: Փոխանակ ըսելու թէ ի՛նչ կրնանք ընել, սղնի խօսակցութեան եւ վիճարկումներու ճամբով փորձենք յառաջդիմել՝ հասկացած ըլլալով, որ Պաղ պատերազմը վերջացած է, խորհրդային փորձանքը սովետամարդ ստեղծելու ապագային կ'անբազան էր չարիք մը: Պատարարուած բացասականութիւնները հարկ է յաղթարկել՝ նոր ժամանակները իրբեւ հայ ազգ դիմաւորելու համար:

Մամուլի Համահայկական խորհրդաժողով մը, որ պէսզի հայ մամուլը, հայկական լրատուութիւնը, իր բոլոր ձեւերով, հայկական լինելութեան բերէ իր դրական նպատակը, փոխանակ կարողանալ կարգադրութիւններով եւ տեղատուութիւններու տնտեսումով մեր անկուսները վարէ:

Գործնապաշտութիւնը ծայրայեղութեան հասցնելով՝ ըսողներ կան, թէ այս բոլորի մասին կը խօսինք, երբ ժողովուրդը կուշտ ըլլայ եւ գործ ունենայ:

3. ՊԼԱՆԵՆ

ԱՇՆԱՆԱՅԻՆ Բ. ՇՐՋԱՊՏՈՅՑ
ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ - ԵԱՊԱՎՃՈՐ 20-27 ՀՈԿՏԵՄԲԵՐ
Պատճառ, նախաճաշ, լւան պտուղներով, բոխք
Հալէպէն, զին փոխան 5755Գ միայն՝ 365\$:
Սուր օրէն առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ Ashjian Tours գործակալութեամբ կիրարկուած միջազգային ճանաչում ունեցող ընկերութեան մը հետ, շքեղ գրաստանով մէկ շաբթուան պտուղներով, Պէյրութի նախաճաշով, դէպի Լաքաթա, Փոքր Սալոն, 2 օր Գահիրէ, Նեղոս գետին վրայ պտուղներով, Թանգարանի մը Բերդ, Կիպրոսի մէջ պտուղներով, նախաճաշով, 2 օր Գահիրէ, ամէն զանախարհում, դժուարիցներու եւ միութիւններու ծանաւոր գեղարք: Մանրամասնութիւնները մօտ օրէն:
Նոր Տարուան բացառիկ շրջապտուղներու յայտագիրները մօտ օրէն: Եւրոպայ եւ Մ. Տ. Ա. Canada-Sydney եւ ի մասնաւորի Հայաստան եւ Եւրոպայ, իշխանական շրջապտուղներ:
ASHJIAN TOURS Tel. 01-261177, 240654, 03-233978: Գիշերները 01-258887:

ԸԱԶԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՏ ԵՏՏ 20 ԵԹԷ ԱՆՈՆՑ ՊԷՍ ԸԼԼԱՅԻ

Նարեկացին ունի հետաքրքրական համոզում մը: Ահա այդ մէկը.

Կը հաւատամ ես ու կը վկայեմ որ Շատ աւելի ըղձալի են քեզ Աղաչանքները մեղաւորներու, Բան արդարներու ամէն մէկ խնդրանք:

Հետաքրքրական իսկապէս: Աստուած արդարներու խնդրանքներով այնքան երջանիկ չէ, որքան երջանիկ է մեղաւորներու աղաչանքով: Տրամաբանօրէն, Աստուած իր նախընտրութիւնը պէտք է կեդրոնացնէր արդարներու վրայ, անմեղներու վրայ, բայց այդպէս չ'ընէր: Աստուած անարդար է ուրեմն արդարներու նկատմամբ: Ո՛չ: Պարզապէս պէտք է հասկնալ որ Աստուած բարի է մեղաւորներու նկատմամբ: Աստուած գիտէ որ արդարները պէտք է ունենին իր ողորմածութեան: Այս համոզումին տրամաբանական հետեւանքն է նաեւ յիշել թէ առողջ մարդիկը բուժուելու կարիքը չեն գոչար:

Առողջ անգամներ ունեցող մարդիկ Կարիք չեն գար բնաւ բուժուելու, Տեսնողներն ալ պէտք չունին առաջնորդներու: Ընչաշատերը չեն յաճիր երբեք Լիցաններու դռներուն առջեւ: Ու ամէն բարիքով յղփացածները չեն սպասեր Սեղանի հացի թափփութներու: Վարքով սուրբերը՝ Կարիք չեն գար ողորմածութեան: Արդ՝ գթա դուռն ինձի, բարձրեալ երկնաւոր:

Վերջին տողով արդէն կը հաստատէ թէ ինք անոնցմէ չէ, վարքով սուրբ եղողներէն, առողջ անգամներ ունեցողներէն, ամէն բարիքով յղփացածներէն չէ:

Որովհետեւ եթէ ես Յոթին նմանեի Ձիս կը համարէի անոր պէս արգար, անարատ: Եթէ ըլլայի Մովսէսի նման, ես ալ անոր պէս վստահ կ'ըսէի. «Տէրը պէտք է որ նախապէս իրեն պատկանողները»: Իսկ եթէ Դաւիթին նմանեի, կ'ըսէի անշուշտ. «Հաստատեցի կարգ ու արդարութիւնը»: Եթէ ըլլայի Եղիայի նման, Ձիս կը համարէի այլ Աստուծոյ, թէ երեմիայի նման ըլլայի կ'օրինակէի նշմարտութիւնը: Եթէ ըլլայի Եգիպտոսի պէս, կը պարծենայի իրաւամբ որ ես Արդարութեամբ քայլեր եմ քու առջեւ: Եթէ Պոլոսի նման ըլլայի, Ձիս կը համարէի բնակարան, Կամ ընդունարան Աստուծոյ յօսքի: Բայց անօրէն, օրեքօրէն գիտակ ըլլալով հանդերձ, Ահա ոչ միայն չեմ կրնար անձս քեզ ներկայացնել Մեծարձնիկ յօսքերով: Այլ նաեւ ամբարշտեալիս լեզուով գովել Բոլորէն բարի հնչախուած անունը քու:

Ինքզինք չափազանց խոնարհեցնելու Նարեկեան այս աղերսանքը պիտի պատկուի միշտ նոյն յուսադրիչ հաստատումով.

Բայց դուռն կարող ես, եւ ամէն ինչի համար Հնարներ ունիս: Մատուցանէ ինձի, Տէ՛ր, փրկութեան ոգի, Պատուականութեան աչ եւ օգնութեան ձեռք:

«Մատեան Ողբերգութեան» բանաստեղծաշունչ աղօթագիրքը իր հարիւրաւոր էջերուն մէջլէն մեզ կ'առնէ կը տանի աղերսանքի այնպիսի պատկերներով, որոնք ըստ երեւոյթին իրենանման են եւ կարծես գիրար կը կրկնեն, բայց իրականութեան մէջ ամէն անգամուս տարբեր հորիզոն մը կը բանան մեր առջեւ, նոյն նիւթին շուրջ մտածելու ու զգալու հազարամէկ տրամադրութիւններ կը հրամայեն մեզի: Այս պատճառաւ է որ ընթերցողը հետաքրքրութեամբ կը դարձնէ Մատեանին էջերը, որպէսզի տեսնէ թէ Նարեկացին ինչպիսի նոր անակնկալ մը պատրաստած է ընթերցողին համար:

Չենք կրնար պնդել թէ իւրաբանիւր նոր էջ անակնկալ մը կը բերէ: Բայց պէտք է ունենալ տասնեակներով էջ դարձնելու որպէսզի հանդիպինք ինքնատիպ մտածումի մը, ինքնատիպ դիտարկութեան մը, Աստուծոյ հետ խօսելու նոր ձեւեր մը: Այս տեսակէտէ գիրքը լեզու է այնպիսի անակնկալներով, գրական այնպիսի գիւտերով, որոնք Մատեանը կը դադարեցնեն միայն պարզ աղօթագիրք մը ըլլալու ու գայն կը վերածեն գրական գործի մը: Եւ արդէն այդ է Գրիգոր Նարեկացին ինչպիսի նոր անակնկալ մը պատրաստած է ընթերցողին համար:

Ռ. ՀՍՏԵՂԵԱՆ

Քարոզարկային Քարոզարկային

ՍԵՌԱՅԻՆ ԲՈՒՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ, ԹԷ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՊՆՆՈՒՄՆԻՅԱՆ ՊՆՆՈՒԹԻՒՆ ԿԵ ՄԻՋԱՍՏԵ ԵՐՈՂՈՒՄԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԻՐԱՄԱՆ ՊԱՅՏՊԱՆ ԽՄԱԲՈՐՈՒՄՆԵՐՈՒ ԸՆՁՈՒՄԻՆ ՏԱԿ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԴԵՊՈՔ ՏԵՂԵԿԱԳՐԵԼՈՒ ԿՈՂՔԻՆ, ԱՌԻՑ ԿՈՒ ՏԱՅ ԱՍԵ ԲԱԶՄԱԶԱՅՆ ԲԱՆԱԿԵԹ

Գնչուներու ինքնակոչ թագաւորը՝ Ֆլորին Զիտապա պատկերասփռուած էր յոյժի մը ընթացքին զինք քննադատողներուն կողմէն: Երկու միջամուխ չըլլալու իր գործերուն: Ան միջազգային դատապարտումի թիրախ դարձաւ իր դեռատի աղջիկը բռնի ամուսնացնելու պատճառով:

Մարդկային իրաւանց պաշտպաններ եւ Եւրոպական Նորհարարանի անդամ մը անմիջական միջոցառումներու դիմելու պահանջներ կայացուցին, երբ Աննա Մարիա Զիտապա դժգոհութեամբ ամուսնացաւ 15 տարեկան պատանիի մը հետ:

«Իբրեւ հայր՝ գիտեմ, թէ ինչ բան լաւ է իմ զաւակներուս համար: Հարկ է յարգել կարգ մը օրէնքներ: Մենք՝ գնչուներն աւանդաբար կանուխ կ'ամուսնացնենք մեր զաւակները», յայտարարեց ան:

Սակայն Ռուսաստանի խորհրդարանին մէջ գնչուներու ներկայացուցիչը դատապարտեց Աննա Մարիայի ծնողները եւ արարքը որակեց նախադիմք մը բոլոր գնչուներուն համար: «12 տարեկան աղջիկ մը անկարող է հասկնալու ամուսնութեան եւ անոր ընկերակցող պարտաւորութիւններուն գաղափարը», ըսաւ ան:

Կ'ենթադրուի, թէ Աննա Մարիա 12 կամ 14 տարեկան է: Ան 7 տարեկան էր, երբ իր հայրը խոտացած էր զինք կնուծեան տալ Պիրիթա Պի-հայր՝ 500 ոսկեդրամի փոխարէն: Երկու ընտանիքները դրկից գրաքննիչներ են եւ միեւնոյն դարպասը կը գործածեն:

Աննա Մարիա նոյնիսկ խոյս տուաւ եկեղեցիէն, երբ իր հայրը կը կատարէր պսակի արարողութիւնը, սակայն ընտանիքի անդամներ համոզեցին զինք, որ վերագուանջ: Ներկայիս Աննա մամայնաձեւ մը մերժած էր փեսան ճանչնալ իբրեւ իր ամուսինը: Անոր բարեկամուհիները կ'ըսեն, թէ ամուսնութիւնը բռնի ուժով ամբողջացած է: Երկու ընտանիքներուն միջեւ համաձայնութիւնը կ'ըսէր, թէ Աննա Մարիա ամուսնութեան գիշերը պէտք էր անցընէր իր ամուսինին հետ: «Պաշտօնապէս բունարարում տեղի ունեցաւ», կ'ըսէ Աննա Մարիայի բարեկամուհիներէն մէկը:

Եւրոպական Միութեան պատուիրակ պարտնուհի էմմա Նիքոլայի անմիջապէս պահանջեց, որ երկու պատանիները հոգածութեան տակ աւնուին: Ան Ռուսաստանի փոխ վարչապետին ուղղուած նամակի մը մէջ ամուսնութիւնը դատապարտեց իբրեւ «մանուկներու իրաւունքներու ահաւոր խախտում»:

«Այս ամուսնութիւնը հակասորինական է, որովհետեւ «կը քաջալերէ սեռային յարաբերութիւնը անչափահասներու միջեւ, ինչ որ ապօրինի է», յայտարարեց Ռուսաստանի Մարդկային իրաւունքներու միութեան նախագահը:

Ռուսաստանի մէջ օրինական ամուսնութեան նուազագոյն տարիքը 16 է: Սակայն դպրոցական տարիքի պատանիներ ամուսնացնելու սովորութիւնը տակաւին կը կիրարկուի գնչուներու հաւաքականութիւններուն մէջ, իսկ Ռուսաստանի իշխանութիւնները ընդհանրապէս կը նախընտրեն միջամուխ չըլլալ:

Այսուհանդերձ Ռուսաստանի նախնաձայնիչի

է կիրարկելու օրէնքներ, որոնք կը համապատասխանեն Եւրոպական Միութեան չափանիշներուն: Երկիրը կը ձգտի Եւրոպական Միութեան միանալ 2007ին: Ռուսաստանի մարդկային իրաւանց պատկերը կարեւոր տեղ ունի անդամակցութեան քննարկումներուն մէջ:

Հետեւեալը էմմա Նիքոլայի կողմէ անմիջական միջոցառումի պահանջը ներկայացնող նամակ մը հաւանաբար պատճառ դարձաւ, որ Ռուսաստանի կառավարութիւնը քննութիւն բանայ գնչուներու թագաւորին աղջկան ամուսնութեան շուրջ եւ պետական հոգածութեան տակ աւնէ երկու պատանիները՝ գանձեք բաժնեյէ հոգ:

Աննա Մարիայի ծնողները հետաքննութիւնը նկատեցին «յարձակումի պատրուակ մը թագաւորական ընտանիքին դէմ»:

Պաշտօնական տուեալներու համաձայն, աւելի քան 550 հազար գնչուներ կը բնակին Ռուսաստանի մէջ: Սակայն կ'ենթադրուի, թէ անոնց թիւը աւելի քան 1-5 միլիոն է: Ռուսաստանի բնակչութիւնը կը հաշուէ 22 միլիոն:

Եւրոպական Միութեան ընկերային հարցերու յանձնակատար Աննա Տիտապա Միտիւրովա Ռուսաստանի գնչու հաւաքականութեան կողմէն խոստովանեց, որ օգնութեան չըլլալու ցեղային խտրականութեան դէմ իրենց պայքարին մէջ, այնքան ատեն որ կը բունարարեն իրենց սեփական ժողովուրդին իրաւունքները:

«Երբ մարդկային հիմնական իրաւունքներու եւ անցեալի որոշ աւանդութիւններու միջեւ բախում մը տեղի կ'ունենայ, աւանդութիւններն են, որոնք պէտք է յարմարին եւ մարդկային սկզբունքները պէտք է յարատեւեն», յայտարարեց ան:

Աննա Մարիայի ամուսնութիւնը երկփեղկում մը տեսողութիւն է գնչուներու հաւաքականութեան մէջ: Ռուսաստանի մէջ մտադրութեամբ թափօնի միջառական Ֆլորին Զիտապայի մրցակից Թորթիքա թագաւորը յատուկ հրովարտակով մը արգիւծ է, որ իր հպատակները ամուսնացնեն իրենց անչափահաս կնուծիները: Ան համացանցի իր կայքին մէջ հրապարակած հրովարտակով մը կը նշէ, թէ աղջիկները պէտք է ամուսնանան 16 տարեկանէն առաջ, իսկ մանչերուն ամուսնութեան նուազագոյն տարիքը 17 պէտք է ըլլայ:

Սակայն Զիտապայի հետեւորդները ամուր կերպով կանչած են իրենց անչափահաս զաւակները ամուսնացնելու դարաւոր աւանդութեան հաւատարմ, որ անիկա կը պահանջէ բարոյական աւելի բարձր արժեքներ եւ պատուար մըն է ամուսնալուծումի դէմ:

ՄԻՋԱՍՏԱՅԻՆ ԲԱՆԱԿԵԹ

Արդեօք Աննա Մարիա Զիտապայի ամուսնութիւնը մանուկներու բունարատութեան օրինակ մըն է, թէ մշակութային այլազանութեան երեւոյթ մը: Արդեօք տարբեր մշակոյթներ պէ՞տք է տարբեր աւանդութիւններ կիրարկեն ամուսնութեան մէջ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»-ի համացանցի կայքին կողմէ բացուած բանավեճ մը կը պարզէ կարծիքներու հետեւեալ պատկերը:

«Եթէ մեր մշակոյթին մէջ անիկա բարոյապէս սխալ է, չի նշանակեր, թէ իրաւունքները կ'անտեսուին, որովհետեւ անոր ծնողներուն աւանդութիւնը այդ կը պահանջէ: Ինչո՞ւ Արեւմուտքը զինովցած է իր հոստորութեամբ եւ թոյլ կու տայ, որ բունարատութիւններ տեղի ունենան իր քթին տակ, խոսափելով միջամտելէ՝ մշակութային անփոփոխականութեան մտախառնութեամբ»: ուստի մը:

«Հարկ է նկատի ունենալ, որ դեռատի աղջիկներու եւ չափահաս տղամարդոց (երբեմն՝ Հօրեղբայրներու) միջեւ կարգադրուած ամուսնութիւնները արտօնուած են Միացեալ Նահանգներու մորմոն հաւաքականութիւններուն մէջ: Հարկ է սեփական տան մէջ կարգ ու կանոն հաստատել, նախքան ուրիշները նախատելը»: ամերիկացի մը:

«Մշակութային տարբերութիւններէ անկախ, կը թուի, թէ գլխաւոր հարցը ազատ կամքով ամուսնանալու սկզբունքն է այստեղ»: բրիտանացի մը:

«Այս ամուսնութիւնը որքան ալ տարօրինակ թուի արեւմուտքիներուն, որոնք իրենք զիրենք հրաշալի կերպով «բաղաբակիր» կը համարեն, անիկա մաս կը կարգէ գնչուներու մշակութային ինքնութեան: Ո՞վ մեզի իրաւունք տուած է

դատելու: Նկարներուն մէջ այնպէս կ'երեւի, թէ փեսան նոյնքան դժգոհ է, որքան հարսը»: նոր վեկիացի մը:

«Անչափահասներու ամուսնութեան սովորութիւնը պէտք է վերատեսուութեան ենթարկուի: Սակայն կարելի չէ ակնկալել, որ ամէն ոք յարմարի արեւմտեան չափանիշներուն»: ամերիկացի մը:

«Մշակութային աւանդութիւնը տեղ չունի այստեղ: Տուեալ երկրին օրէնքը պէտք է կիրարկուի բոլորին պարագային»: դանիացի մը:

«Մշակոյթներն ու աւանդութիւնները պէտք է փոխուին ժամանակներուն հետ»: ղանացի մը:

«Եթէ գնչուներուն ստիպենք, որ չըլին իրենց ապրելակերպը, ստիպալ համազօր պիտի ըլլայ անոնց մշակոյթն ու աւանդութիւնները բնաջնջելու»: լոնտոնցի մը:

«Մանուկներ պէտք չէ բունարատուի մշակոյթի պատճառով»: քանատացի մը:

«Գնչուներուն մշակոյթը մեռնող մշակոյթ մըն է: օգնեցէք անոր փրկութեան եւ ոչ թէ փճացու մին»: քանատացի մը:

«Տակաւին քանի մը դար առաջ շատ բնական էր, որ դեռատի աղջիկ մը ամուսնանար իր կամքով կամ հակառակ իր կամքին: Մեզի՝ արեւմուտքիներուս յատուկ երեւոյթ է մտածել, թէ մեր ապրելակերպը միակ ճիշդ ապրելակերպն է»: հոլանտացի մը:

«Չմոռնաք, որ Ռուսաստանի մէջ հարսին ընտանիքը պարտաւոր է հոգալ հարսանեկան ծախսերը, եւ երբեմն 500 ոսկեդրամը բաւարար չէ»: բրիտանացի մը:

«Կը թուի, թէ ասիկա ճիշդ հարցումը չէ: Կասկած չկայ, թէ այս ամուսնութիւնը մշակութային այլազանութեան մաս կը կարգէ: Սակայն զայն բունարատութիւնը նկատելով կամ չնկատելով կարեւոր է տեսնել անձին մշակութային պատկանելիութենէն: Բուն հարցումը այն է, թէ մեր դատողութիւնը հիմնաւորելու ինչ տուեալներ ունինք»: գուիցերիացի մը:

«Ազատութիւններու մաս կայացողութիւնը հիմնուած է այն գաղափարին վրայ, թէ անհատին իրաւունքներն ու ազատութիւնները կը հասնին մինչեւ հոն, ուր չեն կաշկանդու ուրիշները: Ասիկա արդար չափանիշ էր է, եւ որեւէ անպատեհութիւն չեմ տեսներ, թէ կիրարկուի օտար աւանդութիւններու մէջ»: ամերիկացի մը:

«Պատահած որ պարզապէս մանուկներու բնարատութիւն է»: ամերիկացի մը:

«Որեւէ ամուսնութիւն, որ շնորհ դարուն կը ժխտէ մարդկային իրաւունքները, անընդունելի պէտք է ըլլայ եւ կարելի չէ զայն մշակութային այլազանութեան փառաբանութիւն մը նկատել»: բրիտանացի մը:

ՔԱՂՅՐ ՄԱՆՈՒԿՆ ԴԱՅՔԱՐԸ

ՄԻՋ ԱՒԵԼԻ ՄԵՑ ԹԻՒՈՎ ԱՆՅՈՅ ՇԻՒԱՆԴԵՐ ԶԱՂՐ ՄԱՆՈՒԿԱՐ ԿԵ ՇՈՒԱՆ ԱՅՍ ԱՃԱՐԱՐԵՆ, ՏԱՐԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵ ՍՐԻՆ ՇԱՆՐԱՅԻՆ ԵՐՈՂՈՒՄՆԵՐՈՒ ՄԵՋ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԵ ՂՈՔ:

Անցեալ ամիս Ֆրանսայի մէջ 22 տարեկան վեներուս իւմպէր իր մօր օգնութեամբ վերջ դրաւ իր կեանքին: Ասիկա քաղցր մահուան (ետեր-նէյզա) նորագոյն դէպքն էր լայն հետաքրքրութիւն տեսողած նմանօրինակ այլ դէպքերու շարքին: Ուրիշին օգնութեամբ անձնասպանութեան հարցը անուժ գաղտնիք մը չէ այլեւս եւ հրապարակային բանավեճի նիւթ է բազմաթիւ երկիրներու մէջ:

Այժմ դատական ատենան մը կը քննէ իւմպէրի մարդ Ռիքի կամ մարդասպանութեան յանցանքով ամբաստանելու հարցը: Մինչ այդ, այն բոխիչը, որ օգնած էր երիտասարդին քաղցր մահուան, ամբողջական պատասխանատուութիւն ստանձնած է:

Հարցախոյզները ցոյց կու տան, թէ Ֆրանսացիներուն մեծամասնութիւնը իրաւունք կու տայ իւմպէրի մօր, որ կատարած է իր զաւակին խնդրանքը: Անոնց 80 առ հարիւրը անհրաժեշտ կը նկատէ քաղցր մահուան օրէնքին փոփոխութիւնը:

Հոլանտայի, Զուիցերիոյ եւ Միացեալ Նահանգներու Օրէկոն նահանգին մէջ օրէնքը կ'արտօնէ ուրիշին օգնութեամբ անձնասպանութիւնը: Մասնաւորաբար Եւրոպայի մէջ հանրային կարծիքը հետզհետէ կը գորակցի քաղցր մահուան գաղափարի ջատագովներուն, ինչ որ կը նշանակէ, թէ պետութիւններ պիտի ստիպուին համապատասխան օրէնքներ որդեգրել:

Սակայն բանավեճը տակաւին տարակարծութիւններով լեցուն է: Վերջերս հոլանտացի կնոջ մը մահը ապացուցեց, թէ մշակութային խոր վիճ մը գոյութիւն ունի քաղցր մահը թոյլատրող կամ այս գաղափարին հակադրուած վայրերու միջեւ:

Ամերիկացի աւետարանական քարոզիչ Ժորժ Էքսու կը դիմադրուի դէպի իրական արտայայնման մէջ սպառնալիք մը, որովհետեւ խոստովանած է, թէ ընկերակիցի մը հետ օգնած է հոգեկան անկումէ տառապող կնոջ մը, որ նայլը

նէ տոպրակ մը անցընէ իր գլխուն եւ հեղիւմ չնչէ: Ան 7 հազար տոյար ստացած է իր ծառայութեան համար:

Կ'ենթադրուի, որ էքսու շուրջ 100 հոգիի անձնասպանութեան օգնած է Միացեալ Նահանգներու տարածքին: Սակայն ան ուղարկութիւն չէ գրաւած մինչեւ իրանտայի մէջ պատահած դէպքը: Իրլանտայի մէջ անձնասպանութեան օգնելը մարդասպանութեան համազօր ոճի է, որուն համար կրնայ մինչեւ 14 տարուան բանտարկութեան վճիռ սահմանուի:

Վատիկան բուռն կերպով կ'ընդդիմանայ քաղցր մահուան գաղափարին, թէ եւ անցեալ Մարտին Յովհաննէս Պողոս Բ- պապը իր արտօնած մէկ խօսքին մէջ կը վիճէր անբեռնի հիւանդները ծայրայեղ միջոցներով ողջ պահելու դէմ: Սակայն քաղցր մահուան ջատագով խմբաւորումներու կողմէ կատարուած հարցախոյզներու համաձայն, Իտալիոյ մէջ գայն օրինականացնելու հանրային ուժեղ պահանջ կայ:

Հոլանտա առաջնորդի դեր կը կատարէ քաղցր մահուան օրէնքներու մշակումին մէջ: Ազատական այս երկիրը տասնամեակներէ ի վեր ոչ պաշտօնական կերպով թոյլատրած է ուրիշին օգնութեամբ անձնասպանութիւնը, սակայն անցեալ Ապրիլին էր, որ խորհրդարանը ի վերջոյ վաւերացուց գայն թոյլատրող օրէնքը:

Հոլանտական օրէնքին համաձայն, անհատ մը պէտք է երկար ժամանակ տառապած ըլլայ անբեռնի եւ անտանելի հիւանդութենէ մը, որ պէտք է ուրիշին օգնութեամբ անոր անձնասպանութիւնը օրինական նկատուի: Հիւանդը պէտք է գիտակից ըլլայ, անձնասպանութեան օգնելու պատրաստ բոխիչը պէտք է դիմէ երկրորդ կարգի մը եւ միայն ինք իրաւունք ունի մահացու դամբներ օրեւէ ձեւով դերակատար պէտք չէ ըլլալ:

Պէլճիքա հետեւած է Հոլանտայի՝ որդեգրե-

լով նմանօրինակ օրէնքներ եւ նախագգուչական միջոցառումներ: 2002ի Սեպտեմբերին անդամաւորութենէ տառապող 39 տարեկան երիտասարդ մը առաջին պելճիքացին եղաւ, որ քաղցր մահուան ներարկում մը ստացաւ:

Զուիցերիա որդեգրած է նմանօրինակ օրէնքներ, մինչ Լիւքսեմպուրկ քուէներու չնչին տարբերութեամբ մերժեց շրջել իր օրէնքները: Սակայն գուիցերիական «Տիկնիթաս» բարեսիրական միութիւնը, որ օգնած է 150 անձերու, որպէսզի վերջ դնեն իրենց կեանքին, այժմ տարակարծութեան նիւթ է երկրին մէջ «անձնասպանական զբօսաշրջութիւնը» քաջալերելու պատճառով:

Անցեալ Յունուարին ջիդերու անդամաւորութենէ տառապող հիւանդ մը առաջին բրիտանացին եղաւ, որ առանց թաքցնելու իր նպատակը, Զուիցերիա ճամբողդեց մեռնելու օգնութիւն ստանալու համար:

Այնուհետեւ մարդկային իրաւանց պաշտպան բրիտանացի իրաւաբան մը, որ պաշտպանած էր Նելսոն Մանտելայի դատը, Բրիտանիոյ պետութեան առաջարկած է ուրիշին օգնութեամբ անձնասպանութեան օրէնք մը բանաձեւել:

Բրիտանացի այլ հիւանդ մը՝ Տայան Փրիթի, երկար ժամանակ դատական ատենաներու մէջ իր կեանքին վերջ դնելու իրաւունքին համար պայքարելէ հետք աշխարհէն հեռացաւ բնական մահով:

Անցեալիոյ Նորտըն Թերիթորի շրջանը աշխարհի առաջին վայրն էր, որ քաղցր մահը օրինականացուց 1996ին, սակայն 9 ամիս ետք ստիպեցաւ բեկանել օրէնքը՝ քաղաքական եւ գոյացական տարակարծութիւններու պատճառով: «Վոյնթերի ետեւորն յարապարակութիւն» ներկայացուցիչ Քէյթ Ռիտի համաձայն, ուրիշին օգնութեամբ անձնասպանութեան օրինականացումը հետզհետէ աւելի մեծ գորակցութիւն կը վայելէ՝ մասամբ բժշկապիտութեան նկատմամբ

մարդկց կեցուածքներուն պատճառով:

«Մարդիկ այլեւս չեն ուզեր, որ մէկը թելադրէ իրենց, թէ ինչ պէտք է ընեն: Այժմ բժշկագիտութեան մէջ միջոց ուժը հիւանդը լիազօրել է: Մարդիկ այս կը պահանջեն: Անոնք կ'ուզեն վստահ ըլլալ, թէ կը վայելեն հիմնական իրաւունքներ», կ'ըսէ Ռիտ:

Սակայն ընդդիմադիրներ կը մատնանչեն օրինակը Միացեալ Նահանգներու մէջ Օրէկոնի եւ Հաուայի նման վայրերու, որոնք օրինականացուցած են ուրիշին օգնութեամբ անձնասպանութիւնը: «Փրօ-լայֆ ըլլալը» միութեան համաձայն, Օրէկոնի մէջ առողջ երիտասարդներու անձնասպանութեան համամատուցութիւնը բարձրացած է քաղցր մահուան օրէնքին վաւերացումէն ետք, հակառակ անոր սահմանած նախագուչական միջոցառումներուն:

Նոյն միութեան համաձայն, Հոլանտայի մէջ մարդիկ կը վախնան հիւանդանոց երթալու, որովհետեւ կը կարծեն, թէ պիտի սպաննուին հոն, նկատի ունենալով, որ այսոյս հիւանդներու յատուկ բաժանմունքները դոյութիւն չունին հոլանտական հիւանդանոցներուն մէջ:



Զինատեսանի մէջ, ուր բժիշկներ պետութեան կը ծառայեն, քաղցր մահուան վիճելի բնոյթը ամէնէն վարագ ձեւով իր մորթին վրայ զգացած է 49 տարեկան աշխատաւոր մը: 17 տարի առաջ ան առաջին քաղցր մահը կիրարկեց Չինաստանի մէջ, երբ բժիշկի մը օգնութեամբ վերջ դրաւ լեռնային կարծրացումէ տառապող իր մօր կեանքին: Ան բժիշկին հետ ձեռնարկուեցաւ եւ դատական հետապնդումի ենթարկուեցաւ մահուան գաղափարին ջատագովներուն, ինչ որ կը նշանակէ, որ դատական ատենան երկուքը անմեղ հռչակեց 1992ին, սակայն քաղցր մահուան բանավեճը տակաւին չէ աւարտած Զինաստանի մէջ:

Նոյն չինացին այժմ իր տառապի թոքի քաղցկեղէն, չնչինական դժուարութիւններէ եւ սրտի հիւանդութեան: Անցեալ Յունիսին ան արտօնութիւն խնդրեց նոյն միջոցներով վերջ դնելու իր կեանքին, սակայն ստացաւ կտրուկ պատասխան մը: «

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՕԼԻՄՓԻՔ - Հ.Մ.Ը.Մ.՝ 2 - 1

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 2րդ հանգրուանին, Շաբաթ օր, Հ.Մ.Ը.Մ. 2 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Օլիմպիքին՝ Սայտայի Քաղաքապետարանի դաշտին վրայ:

Կիսախաղը 0 - 0 աւարտելէ ետք, Հ.Մ.Ը.Մ. 68րդ վայրկեանին բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ Վարդան Ղապարեանի, որ սքանչելի փոխանցում մը ստացաւ Արթուր Քոչարեանէն եւ իր կարգին ամենայն վարպետութեամբ գնդակը վետեղեց մրցակից բերդին ձախ անկունը:

Գծախտաբար, սակայն, Հ.Մ.Ը.Մ. անհասկընալիորէն դիմեց պաշտպանողական խաղաճի եւ դանդաղեցունց իր յարձակումներուն ընթացքը, որ մինչ այդ լաւ թափ ստացած էր եւ նոյնիսկ սկսած էր նեղ կացութեան մատնել մրցակիցը: Սակայն ետեւ քաշուելէն ետք, ճնշումը հետպետէ սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի վրայ եւ կարճ ժամանակամիջոցի մէջ ան ստացաւ երկու կող, երկուքն ալ բերդապայ-յետուսպահ գիծ համակարգումի պակասին հետեւանքով: Երկրորդ մրցումն ըլլալով ի յայտ կու գայ յետասպահ գիծի անկայուն վիճակը:

Ստորեւ՝ 2րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Շապապ Սահէլ - Թատամոն Սուր	1 - 0
Օլիմպիք - Հ.Մ.Ը.Մ.	2 - 1
Սաճէս - Անսար	3 - 2
Սաֆա - Հ.Մ.Մ.	0 - 3
Նրժմէ - Սալամ	3 - 1
Ահտ - Մապարա	2 - 0

Ստորեւ՝ դասաւորումը.

	ԿԵՏ
1.- Նրժմէ	6 (6 - 2)
2.- Ահտ	6 (5 - 2)
3.- Սաճէս	6 (4 - 2)
4.- Օլիմպիք	6 (3 - 1)
5.- Շապապ Սահէլ	4 (3 - 2)
6.- Հ.Մ.Մ.	3 (3 - 1)
7.- Սաֆա	1 (2 - 4)
8.- Մապարա	1 (2 - 4)
9.- Անսար	1 (2 - 5)
10.- Թատամոն Սուր	0 (0 - 2)
11.- Սալամ	0 (3 - 6)
12.- Հ.Մ.Ը.Մ.	0 (2 - 5)

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
 8:45.- «Աստղեր»
 9:00.- «Ուտիօ - Թատրոն» . կը ներկայացնեն Սարի Ռոզ Սանուկեան եւ Սամուէլ Մարգարեան
 9:40.- «Առատեան տոն»
 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
 1:30.- Հայաստանեան լուրեր
 3:00.- Արաբերէն յայտագիր.
 Հարցազրոյց լրագրողներ Թանհա Թումա Սրիանցայի եւ Նատա Անիտի հետ, կը խօսին իրենց իրատարակած գիրքին եւ գործունէութիւններուն մասին
 4:45.- «Բարի երեկոյ Վանայ Զայնէն» . նոր յայտագիր. ուղղակի ձայնասփռում՝ այլազան եւ հետաքրքրական նիւթեր, երգեր, հարցազրոյց եւ այլն
 7:00.- «Վանայ Սփոր» . անցնող շաբթուան մարզական լուրերու ներկայացում եւ խաղ-մրցանք

ՄԱՐՁԻԿ
 ԻՐ. ՏԱՐԻ, 2003՝
 ԹԻԻ 8 (254)

ՆԱԽԱՐԱՐԵԱՆ 28րդ հոկտեմբեր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ՀՄ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

- «Մարզիկ»ի այս թիւով տեսնել՝
- հմբարկական - Յիշենք, յիշեցնենք
- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան օրերէն յուշեր (2) - Շարաբ Ա. Քհնյ. Մեհրապետան
- Նաւասարդեան օրեր եւ Սամուէլ Մկրտիչեանի «Հ.Մ.Ը.Մ.ական մարզու պարուններ»ը - Կարօ Պետրոսեան
- Հ.Մ.Ը.Մ.ականներ առանց սահմանի
- Նաւասարդեան 28րդ մարզախաղեր - Մարօ Քէշիշեան

Թիւր կ'ընդգրկէ նաեւ համացանցի, սկստուական եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ: Սակ՝ 3000 Լ.՝:

Ստանալու համար դիմել Համագրային գրախանութի:

ՄԻՔԱՅԵԼ ՇՈՒՄԱԽԸՐ ԸԱՆԴԻՍԱՅԱԲ ՖՈՐՄԻԼԱ 1Ի ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՎԱՐՈՐԴԸ

Յորմիւլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 16րդ եւ վերջին կրան փրին, որ տեղի ունեցաւ երէկ՝ Սուլուրայի մէջ (Ճափոն), Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայել Շումախրիի համար եղաւ պատմական յաջողութիւն, որ ան վեցերորդ անգամ ըլլալով հանդիսացաւ աշխարհի ախոյեան, բոլոր ժամանակներու մրցանիշները կտրելով: Ան միանգամընդմիջ ապացուցեց, որ կը հանդիսանայ ոչ միայն իր ժամանակաշրջանին, այլեւ բոլոր ժամանակներու մեծագոյն վարորդը: Ան անցեալ տարի հաւասարած էր արժանիքին իր իր փրին: Շումախրիի հաստատած մրցանիշին, որ 1951ին, 1954ին, 1955ին, 1956ին եւ 1957ին հանդիսացած էր աշխարհի ախոյեան: Շումախրիի վեց տիտղոսները շահած է 1994ին, 1995ին, 2000ին, 2001ին, 2002ին եւ 2003ին: Շումախրիի Ֆանճիոյի ետին երրորդ դիրքին վրայ կը գտնուի ֆրանսացի Ալէն Փրոսթ, որ չորս անգամ՝ 1985ին, 1986ին, 1989ին եւ 1993ին հանդիսացած է աշխարհի ախոյեան:

(ՊԱՐ) ինքնաշարժին, սակայն ան փրի սրած մտնելով շատ արագ յաջողեցաւ վերադառնալ վայրուղի: Երէկուան մեծագոյն անբախտը սակայն կարելի է նկատել քոլումպիացի իտալացի Փապիօ Մոնթոյան (Ուիլիըմ), որ երրորդ լէփին ինքնաշարժի խանգարում ունենալով չկրցաւ շարունակել մրցումը: Պրապիլիի Ռուպէնս Պարիքելլօ (Ֆեռարի),

որ շահեցաւ երէկուան կրան փրին արձանագրելով՝ 1 ժամ 25 վայրկեան եւ 11 երկվայրկեան արդիւնք մը, մեծապէս նպաստեց իր խումբին, որ շահի նաեւ խմբային տիտղոսը: Անոր ետին, Մաքլարընի վարորդներ՝ ֆինլանդացի Քիմի Ռայքոնըն եւ բրիտանացի Տէյվիտ Քուլթարտ, յաջորդաբար գրաւեցին երկրորդ եւ երրորդ դիրքերը:

Ստորեւ՝ վարորդներուն վերջնական դասաւորումը.

	ԿԵՏ
1.- Միքայել Շումախրի (Գերմանիա)	93
2.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանդիա)	91
3.- իտալացի Փապիօ Մոնթոյան (Քոլումպիա)	82
4.- Ռուպէնս Պարիքելլօ (Պրապիլ)	65
5.- Ռալֆ Շումախրի (Գերմանիա)	58
6.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա)	55
7.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա)	51
8.- Եառնօ Թրուլի (Իտալիա)	33
9.- Ենսըն Պարթըն (Բրիտանիա)	17
10.- Մարք Ուեպլըր (Աւստրալիա)	17
11.- Հայնց-Հերլըտ Ֆրենցըն (Գերմանիա)	13
12.- Ճիանքարլօ Ֆիլիքելլա (Իտալիա)	12
13.- Քրիսթիանօ Տա Մարթա (Պրապիլ)	10
14.- Նիք Հիւքէլլըտ (Գերմանիա)	6
15.- Օլիվիէ Փանիս (Ֆրանսա)	6
16.- Ժաք Վիլլընթօլ (Քանադա)	6
17.- Մարք Խեմէ (Սպանիա)	4
18.- Թաքուս Սաթօ (Ճափոն)	3
19.- Ռալֆ Ֆըրմըն (Բրիտանիա)	1
20.- Ճապի Ուիլիըն (Բրիտանիա)	1

Ստորեւ՝ խումբներուն վերջնական դասաւորումը.

	ԿԵՏ
1.- Ֆեռարի	158
2.- Ուիլիըմս	144
3.- Մաքլարըն	142
4.- Ռէնօ	88
5.- ՊԱՐ	26
6.- Սաուպլըր	19
7.- Ժակուար	18
8.- Թոյրօ	16
9.- Ճորտըն	13
10.- Միլնարտի	0

ԸՄՍԱԶԳԱՅԻՆ ԸԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Ելոյթ կ'ունենայ Հայրենի միջազգային դաշնակահար ԱՐՄԵՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ Հայրենի տաղանդաւոր ջութակահար ՍԱՐՏԻՆ ԵԱՒԵԱՆ

Հովանաւորութեամբ՝ Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի հոլ»ին մէջ

Տոմսերը ստանալ Համագրային գրախանութն (Շաղգոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), տիպոքթը Ենթա (Պուրճ Համուտ), Սթիւտիօ Վաչէ (Հաճըն), Obelix գրախանութ (Անիլիա) եւ ելոյթի օրը կիշէն կամ հեռուայնել 01 - 249375 եւ 01 - 265899 քիւերուն:

ԵՒՐՕ-2004. ՉՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱԸԱՐՔ

ՖՐԱՆՍԱ ԱՊԱՅՈՒՆԵՑ ԿԱՐԵԼԻ 24 ԿԵՏԵՐԸ

Եւրօ-2004ի վտումի մրցաշարքին, Շաբաթ օր Եւրօպայի դաշտերուն վրայ տեղի ունեցան վերջին հանգրուանի մրցումները, որոնցմէ ետք յստակացաւ իրաքանչիւր խմբակի պատկերը:

Մրցաշարքը հիւրընկալող երկրին՝ Փորթուգալի կողքին, աւարտականին իրենց տոմսերը պահովեցին՝ Ֆրանսա, Գանիա, Չեխիա, Շուէտ, Գերմանիա, Յունաստան, Անգլիա, Պուլկարիա, Իտալիա եւ Չուիլցերիա: Իսկ փլէյօֆի մրցումներուն տոմսը պահովեցին՝ Սլովենիա, Նորվեգիա, Հունաստա, Լատվիա, Սկովտիա, Սպանիա, Թուրքիա, Իսրայիլ, Կալէս եւ Ռուսիա: Այդ տարբ խումբերը իրարու դէմ երթոյսարձի դրութեամբ մրցումներ պիտի կատարեն, որոնցմէ հինգը պիտի ապահովեն Փորթուգալի տոմսը:

Շաբթ օր տեղի ունեցած մրցումները կարգ մը խումբերուն համար, որոնց կարգին՝ Ռուսիա, Պելճիքա եւ Այիը, եղան անբախտ, որովհետեւ անոնք դուրս մնացին մրցաշարքէն: Առաջին երկուքն համար պարագան եղաւ աւելի անբախտ, որովհետեւ անոնք թէեւ իրենց խմբակին երկրորդ դիրքը գրաւող խումբերուն նման նոյնքան կէտ ունեցան, սակայն անոնց միջեւ տեղի ունեցած մրցումներուն արդիւնքները նկատի ունենալով, առիտ ունին Նորվեգիոյ եւ Իսրայիլի, որ ապահովեն իրենց տոմսերը:

Չորս խումբեր միայն՝ Ֆրանսա, Չեխիա, Գերմանիա եւ Անգլիա յաջողեցան մրցաշարքը աւարտել առանց պարտութեան, մինչ եօթ խումբեր՝ առանց յաղթանակի: Իսկ երեք այլ խումբեր՝ Լուքսամպուրկ, Սան Մարինօ եւ Հիւսիսային Իրլանտա, իրենց կատարած ութ մրցումներուն ընթացքին նոյնիսկ չյաջողեցան կոլ նշանակել մրցակիցներուն բերդէն ներս:

Տիտղոսակիր Ֆրանսա եղաւ մրցաշարքին ամենէն մեծ տպաւորութիւն ձգող խումբը, իր կատարած ութ մրցումներն ալ յաղթանակով աւարտելով եւ ապահովելով առաւելագոյն 24 կէտերը: Իր կատարած վերջին մրցումին անիկա 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Իսրայիլը, շնորհիւ՝ Հանրիի (9րդ), Թրեյկելի (25րդ) եւ Պուստոնկի (43րդ) նշանակած կոլերուն:

1984էն ի վեր Ֆրանսա չէր յաջողած յաջորդական 12 յաղթանակ արձանագրել:

Հայաստանի ֆուտբոլի պայքարի խումբը թէեւ իր կատարած վերջին մրցումին, 4-0 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Սպանիայէն, սակայն այս վերջինը չյաջողեցաւ ապահովել իր տոմսը: Անիկա պիտի մասնակցի փլէյօֆի մրցումներուն: Վալետըն (6րդ), Ռուսլ (75րդ) եւ Ռեյնա (86րդ եւ 90րդ) նշանակեցին Սպանիոյ կոլերը:

2. խմբակին պարագլուխի դիրքը գրաւող Յունաստան 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հիւսիսային Իրլանտան, շնորհիւ՝ Թիսարթաի նշանակած փենալթիին (69րդ), իր 74 տարուան պատմութեան մէջ երրորդ անգամ ըլլալով յաջողեցաւ կարեւոր մրցաշարքին իր տոմսը ապահովել: Առաջինը՝ Եւրօ-1980ին (Իտալիոյ մէջ), իսկ երկրորդը՝ 1994ի Մոնտիալին (Միացեալ Նահանգներ):

Հայաստան, այսպիսով մրցաշարքը աւարտեց եօթ կէտով, գրաւելով իր խմբակին չորրորդ դիրքը, արձանագրելով՝ երկու յաղթանակ, մէկ հաւասարութիւն եւ կրելով՝ հինգ պարտութիւն: Հայրենի մարզիկները իրենց կատարած ութ մրցումներուն ընթացքին նշանակեցին 7 կոլ եւ ստացան 16 կոլ:

Անգլիա, որ Թուրքիոյ դէմ իր մրցումը կատարեց առանց ոչ իսկ անգլիացի մէկ համակիրի, յաջողեցաւ 0-0 արդիւնքով հետանալ Թուրքիայէն եւ ապահովել իր տոմսը. թէեւ արդիւնքը կրնար ի նպաստ անոր ըլլալ՝ 1-0, եթէ փենալթիին իր նպատակին հասցնէր խմբապետ Տէյվիտ Պեքիան: Մրցումին ներկայ եղող 42 հազար թուրք համակիրները թէեւ յաղթանակ կ'ակնկալէին իրենց կազմէն, սակայն անգլիացիք այդ մէկը արգիլեցին անոնց:

Ստորեւ՝ Շաբաթ օրուան մրցումներուն ամբողջական արդիւնքները.

● Ա. ԽՄԲԱԿ	
Կիպրոս - Սլովենիա	2 - 2
Ֆրանսա - Իսրայիլ	3 - 0
● Բ. ԽՄԲԱԿ	
Նորվեգիա - Լուքսամպուրկ	1 - 0
Պոնիա - Գանիա	1 - 1
● Գ. ԽՄԲԱԿ	
Աւստրիա - Չեխիա	2 - 3
Հունաստա - Մոլտովիա	5 - 0
● Դ. ԽՄԲԱԿ	
Հունգարիա - Լեհաստան	1 - 2
Շուէտ - Լատվիա	0 - 1
● Ե. ԽՄԲԱԿ	
Սկովտիա - Լիթվանիա	1 - 0
Գերմանիա - Իսլանտա	3 - 0
● Զ. ԽՄԲԱԿ	
Յունաստան - Հիւսիսային Իրլանտա	1 - 0
Հայաստան - Սպանիա	0 - 4
● Է. ԽՄԲԱԿ	
Թուրքիա - Անգլիա	0 - 0
Լիխթենշտայն - Սլովակիա	0 - 2
● Ը. ԽՄԲԱԿ	
Պելճիքա - Էսթոնիա	2 - 0
Իսրայիլ - Պուլկարիա	1 - 0
● Թ. ԽՄԲԱԿ	
Կալէս - Սերպիա	2 - 3
Իտալիա - Ալբանիա	4 - 0
● Ժ. ԽՄԲԱԿ	
Չուիլցերիա - Այիը	2 - 0
Ռուսիա - Վրաստան	3 - 1

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔՈՒԷԱՐԿՈՂՆԵՐՈՒՆ 50 ԱՌ ՀԱՐԻՒՐԸ ԿԸ ՆԱԽԸՆՏԲԵ, ՈՐ ՅԱԶՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՊՈՒՇ ՓՈԽԱՐԻՆՈՒԻ

Մ. Նահանգներու մէջ տեղի ունեցած նորագոյն հարցախոյզին արդիւնքները շարքավերջին ցոյց տուած են, թէ քուէարկողներուն 50 առ հարիւրը կը նախընտրէ, որ 2004ի նախագահական ընտրութիւններուն ճորձ Պուշ փոխարինուի: Սեպտեմբեր 25 - 26ին կայացած նման հարցախոյզի մը մէջ, քուէարկողներուն 47 առ հարիւրը նման փափաք յայտնած էր:

Դեմոկրատներու մօտ անոր գլխաւոր մրցակիցը՝ ՕթՄՆի նախկին հրամանատարներէն Ուեյլի Բլաքբըն է: Ան առաջին դիրքը կը գրաւէ դեմոկրատներու ցանկին վրայ:

Նախագահ Պուշ Շաքար օր պնդած է, որ Մ. Նահանգներու անոնց դաշնակիցները յստակ ռազմավարութիւն մը ունին իրարեւելքներուն օժանդակելու, որպէսզի «կայուն, արդար եւ բարգաւաճ երկիր մը» կերտեն:

Ան ըսած է, թէ իր կողմէ առաջադրուած Իրաքը «Ամերիկայի կամ աշխարհի սպառնալիք պիտի չըլլայ»: Սակայն ընդդիմադիր դեմոկրատները վզուշացուցած են, որ Պուշ պէտք է հաշի տայ հսկայ զուժարներուն մասին, զորս Մ. Նահանգներու այդ նպատակով կ'ուղղեն դէպի Իրաք:

(ԱՖՓ)

ԳԼՈՒԽԵՆ ՄԻԱՑԱԾ ԵՐԿՈՒՐՆԵԱԿՆԵՐՈՒ ՅԱԶՈՂ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԵՔՍԱՍԻ ՄԵՋ



Տալասի (Թեքսաս) մէջ, ամերիկացի բժիշկներ երէկ յաջողեցան վտանգաւոր վիրաբուժութիւն մը կատարելու և իրարմէ անջատել գլուխներէն միացած եգիպտացի երկու տարեկան տղայ երկուորեակ մը: Հաղորդուեցաւ, որ մասնակցեալն առողջութիւնը յաւ վիճակի մէջ է: Անմէտ և Մոհամէտ Իպրահիմ երկուորեակները ծնած են Գահիբէ, սակայն աւելի քան տարիէ մը ի վեր փոխադրուած էին Թեքսաս:

Վիրաբուժութեան մասնակից դարձան աւելի քան 40 բժիշկներ և հիւանդապահներ ու այլ մասնագէտներ:

معهد بيبيلوس
للتعليم المهني والتقني

BT
بكالوريا فنية

TS
إمتياز فني

TDS
تكنولوجيا الاختصاص

— منهاج فرنسي، منهاج إنكليزي —

خريجو معهد بيبيلوس يشكلون ظاهرة حضارية واقتصادية في لبنان والعالم

كن واحداً منهم

للمراجعة والتسجيل

* قرن الشباك - سنتر أبراج ٢٥٦٧/٢٩١
* حارة حريك - طريق المطار ٨١٣/٢٧٣
* الدورة - بناية الضمان ٤٦٠٠/٨٩٤
* عين زحلثا - الشوف ٤٠٠/٢٣٠

ԱՐԱՅԱԹ - ՔՈՐԷՅ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՄԸ Ե

Ֆաթիի բարձրաստիճան պատասխանատուներ հանդիպում մը ունեցան երէկ Ռամազյանի մէջ, փարատելու համար տարակարծութիւնները պաղէստինեան նոր կառավարութեան կազմին մասին: Մինչ այդ, իսրայէլեան ուժերը կը շարունակեն գործողութիւնները Կապալի հարաւային շրջանին դէմ, որ աղէտի գօտի հռչակուեցաւ Կապալի կառավարչին կողմէ:

Պաղէստինեան իշխանութեան նախագահ Եաթեր Արաֆատի խորհրդարանուն Շաքար օր ըսած էր, որ վարչապետ Անմէտ Քորէյի հետ տարակարծութիւնները փարատած են եւ թէ Քորէյի համաձայնած է արտակարգ դահիճ մը ղեկավարել մինչեւ այս ամսուան աւարտը: Նապիլ Ապու Ռուտայա աւելցուց, որ սահմանադրական երդում տուած նախարարները պիտի շարունակեն իրենց գործը: Ապու Ռուտայա ըսաւ նաեւ, որ արտակարգ դահիճին իրատարութիւնները անմիջապէս ի պօրու են: Ան յայտնեց, որ մինչ այդ, Քորէյի պիտի շարունակէ աւելի ընդարձակ կառավարութիւն մը կազմելու ճիգերը:

Արաֆատի ու Քորէյի միջեւ վեճը լուծուած ըլլալու յայտարարութիւնը չի ջնջեր սակայն ներքին գործոց նախարարին շուրջ հարցականը: Ըստ կարգ մը աղբիւրներու, երդում տուած նախարարները պիտի շարունակեն իրենց գործը: Ներքին գործոց նախարար Նապեր Եուսուֆ մերժած էր երդում տալ, պահանջելով խորհրդարանին վաւերացումը: Յստակ չէ, թէ նոր յայտարարութեան լոյսին տակ ինչ պիտի ըլլայ կառավարչութիւնը: Պաշտօնատար մը ըսաւ, որ Քորէյ կը պնդէ Եուսուֆի մասնակցութեան, մինչ Արաֆատ կը մերժէ: Այլ աղբիւր մը յայտնեց, որ Քորէյի պիտի ստանձնէ ներքին գործոց նախարարութիւնը մինչեւ ընդարձակ կառավարութեան կազմութիւնը, կամ մինչեւ որ Եուսուֆ երդումը տայ:

Միւս կողմէ, յաջորդական երրորդ օրն ըլլալով իսրայէլեան ուժերը շարունակեցին գործողութիւնները Ռաֆահի եւ անոր շրջակայքին դէմ, թէև կարգ մը աղբիւրներ հաղորդեցին, որ իսրայէլեան ուժերը սկսած են հեռանալ շրջանէն:

Իսրայէլեան պինտրակաւ աղբիւր մը հաղորդեց, որ գործողութիւնը պիտի շարունակուի, մինչեւ որ յայտնաբերուին ու քանդուին վէճի մաքսանէնզութեան համար գործածուող ստորերկրէայ բոլոր անցքերն ու փապուղիները, որոնք Ռաֆահը Եգիպտոսի կը միացնեն:

Ռաֆահի կառավարիչը՝ Մաժիտ Ղալ յայտարարեց, որ Ռաֆահ աղէտի գօտի դարձած է: Ղալ ըսաւ, որ իսրայէլեան ուժերը քանդած են ճամբաներ, ջուր, էլեկտրականութիւն եւ հեռաձայն հալթալթող ցանցերը: Այլ աղբիւր մը ըսաւ, որ աւելի քան հարիւր բնակարաններ ունեւորուած ու քանդուած են:

Ռաֆահի դէմ յարձակումը դատապարտուեցաւ բազմաթիւ երկիրներու ու ղեկավարներու կողմէ: Անոնցմէ մէկն էր Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք, որ ցաւ յայտնեց, որ միջազգային ընտանիքը անկարող է վերականգնելու Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը: Շիրաք ըսաւ, որ խաղաղութեան քառեակին հովանաւորած ճամբու քարտէսը պէտք է յարգուի:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մըն ալ դատապարտեց իսրայէլեան բանակին Ռաֆահ ներխուժումը եւ ուր պաղէստինցիներու սպանութիւնը:

● ՊԱԿԻ քաղաքական ղեկավարութեան անդամ Ֆարուք Քատունի յայտարարեց, որ պաղէստինցիները պիտի շարունակեն իսրայէլի դէմ պինեալ պայքարը, մինչեւ որ պաղէստինեան բռնագրաւուած հողերը ապստարտուին:

● ԵՒՐՈՊԱԿԱՆ Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի, որ երէկ հանդիպում մը ունեցաւ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆի հետ, ըսաւ որ տիրող իրավիճակը յոռետեսութիւն կը պատճառէ:

(ԱՖՓ)

ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՅԹՈՒՄ...

Շարունակուած Ա. Էջէն

Երէկ Իրաքի վանապան շրջաններէն հարիւր հազարաւոր շիիներ ուղղուեցան Քարպալա սուրբ քաղաքը՝ նշելու համար 9րդ դարուն ապրած իմամ Մեհտաբի տարեդարձը:

Տարիներէ ի վեր առաջին անգամն ըլլալով էր, որ Իրաքի մեծամասնութիւն հանդիսացող համայնքը կրնար Քարպալա ուխտագնացութիւն մը կազմակերպել:

Սակայն մինչ շիիններ բռնատէրին տապալումը ողջունած են, անոնք նաեւ հետզհետէ աւելի բարձրաձայն կերպով կը դատապարտեն ամերիկեան ուժերու զիջարարութեամբ իրենց երկրին գրաւումը եւ կը քննադատեն Ռաշիդիկըրի կողմէ հաստատուած իշխող խորհուրդը:

25 անդամաց խորհուրդին կողմէ նշանակուած կառավարութեան ուժեղ մարտահրաւէր մը ուղղելով, կրօնական Մոքթաա Սատր Ուրբաթ օր յայտարարած է կազմութիւնը մրցակից կառավարութեան մը, որուն մաս կը կազմէ կրօնական հարցերու նախարարութիւն մը եւ ուրիշ մը, որ պատասխանատու է «առաքինութեան քաջալերման եւ շարութեան կանխարգիլման»:

Անոր բանբերներէն մէկը երէկ ըսած է, թէ «փոխ ընտրանք կառավարութիւնը» պիտի զլխաւորուի իսլամներու կողմէ, սակայն ամէնուն առջեւ բաց պիտի ըլլայ:

Սատր արդէն իսկ իր պինեալ խմբակը՝ Մեհտաբ բանակը, կազմած է: Ըստ անոր հետեւորդներուն բանակը շուրջ 10 հազար անդամ ունի:

ԻՐԱԵՑԻ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇԱԿ ՍԸ ՁԵՐԱԿԱՆՈՒԹԱԾ

Մինչ այդ, Մատրիտի մէջ երէկ լրատու աղբիւրներ հաղորդած են, որ իրաքցի պահակ մը, որ անցեալ շաբաթակիւրքին Պաղտատի մէջ սպաննուած սպանացի դիւանագետի մը պաշտպանութիւնը ստանձնած էր, ձեռքբաղաւ իր ռազմական անձնատուր ըլլալէ ետք:

Սպանիա Իրաքի մէջ շուրջ 1250 պինտուր ունի: Մ. Նահանգներ կ'ուզեն, որ այլ երկիրներ նաեւ ուժ դրկեն Իրաք՝ օժանդակելու համար գետնի վրայ գտնուող 155 հազար պինտուրներուն, որ երկիրը կայունացնելու օժանդակեն:

Սէնտակաւ Արաբիա երէկ ըսած է, թէ Իրաք ուժ պիտի չըրկէ «եթէ իրաքեան օրինական կառավարութիւն մը» այդ իմաստով կոչ չուղղէ: Իսլամական երկիրները շաբաթավերջին կոչ ուղղած են Իրաքէն օտար ուժերու հեռացման:

Մալեպիոյ մէջ՝ Իսլամական խորհրդածողովի կազմակերպութեան այս շաբթուան վեհաժողովին պատրաստուելով, անոր ընդհանուր քարտուղար Ապտէլուահէտ Պելքեպի ըսած է, որ ՄԱԿ պէտք է ստանձնէ իրաքեան հարցերու տնօրինումը՝ «յստակ եւ կարճատեւ ժամանակացոյցի մը հիմամբ»:

Միւս կողմէ, «Քալիթա» ցանցին մէկ բանբերը դատապարտած է Իրաքի իշխող խորհուրդը կոչ ուղղելով Մ. Նահանգներու դաշնակից իրաքցի կրօնաւորներու դէմ յարձակումներու ձեռնարկելու:

Պէլքեպի մէջ, պաշտօնական լրատու աղբիւրները հաղորդած են, թէ Չինաստանի արտաքին գործոց նախարար Լի ժաօքսինկ երէկ Մ. Նահանգներու իր պաշտօնակիցին՝ Քոլին Փաուլըի ըսած է, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ Իրաքի մասին նոր բանաձեւ մը ՄԱԿի աւելի կարեւոր դերակատարութիւն պէտք է տայ:

Օր մը առաջ, Լի հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցած է իր ռուս պաշտօնակիցին՝ Իկոր Իվանովի հետ:

Ռուսիոյ մը Չինաստանի կարծիքով ՄԱԿի բանաձեւը «պէտք է յստակ ծրագիր մը ընդգրկէ Իրաքի գերիշխանութեան վերահաստատման համար եւ ՄԱԿին կեդրոնական դեր մը տայ՝ տագնապ լուծելու համար», ըսած է Ռուսիա հաղորդակցութեանէն ետք, յայտարարութեան մը մէջ:

ՊԱՐԶԱՆԻ ԵՒ ՄՈՒՍԱ Կ'ԸՆԴԴԻՄԱՆԱՆ ԻՐԱՔ ԹՐԲԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԱՌԱՔՍԱՆ

Քիրտիստանի ժողովրդավարական Կուսակցութեան ղեկավար Մասուտ Պարպանի, որ Իրաքի առժամեայ իշխող խորհուրդին մէկ անդամն է, երէկ Գահիբէի մէջ Արաբական Լիկային կոչ ուղղած է, որ ընդդիմանայ Թուրքիոյ կողմէ Իրաք ուժերու առաքման:

Ան Արաբական Լիկայի ղեկավար Անր Մուսայի հետ տեսակցութեան մը ետք թղթակիցներու յայտնած է, որ Արաբական Լիկան «պօրավիզ պիտի կանգնի իշխող խորհուրդին, որեւէ դիրքորոշումին՝ թրքական ուժերու կամ դրացի այլ երկիրներու կողմէ հաստատումին գծով»:

Ան աւելցուցած է, թէ Իրաքի մէջ ուժերու որեւէ հաստատում պէտք է կանաչ լոյս ստանայ իշխող խորհուրդին եւ տեղի ունենայ ՄԱԿի բանաձեւերու ծիրէն ներս:

Մուսա ըսած է, որ իշխող խորհուրդէն պաշտօնական պատգամ մը ստացած է խորհուրդին եւ գրաւող ուժերուն միջեւ գոյութիւն ունեցող կարգ մը տարակարծութիւններու մասին, ինչ կը վերաբերի որոշ հարցերու:

Թուրքիոյ խորհրդարանը անցեալ Երեքշաբթի օր կանաչ լոյս տուած էր թրքական ուժերու Իրաքի մէջ հաստատման՝ առաւելագոյնը մէկ տարուան համար, իշխող խորհուրդին քանի մը անդամներու մօտ ընդդիմութեան արտայայտութիւններ յառաջացնելով:

Մուսա աւելցուցած է, որ արաբ արտաքին գործոց նախարարները Չորեքշաբթի օր ժողով մը պիտի կայացնեն՝ Մալեպիոյ մէջ իսլամական վեհաժողովին առընթեր, թրքական ուժերուն հարցը քննարկելու համար:

Պարպանի դիտել տուած է, որ թրքական կամ դրացի այլ երկիրներէ ուժերու հաստատումը Իրաքի մէջ յարուածութիւնը աւելի եւս պիտի սրէ:

«Թուրքիա իր սեփական օրակարգը ունի եւ Իրաքի մէջ անոր միջամտութիւնը բազմաթիւ հարցերու դուռ պիտի բանայ», ըսած է ան:

(ԱՖՓ)

ՄԱԿԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՈՒժԵՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԳՈՒՇԱՅՈՒՄԻ ԿՈՉ Կ'ՈՒՂԳԵ ԻՐԱՆԻ

ՄԱԿի կորիզային ուժանիթի գործակալութիւնը վզուշացումի կոչ ուղղեց Իրանի, դիտել տալով որ ժամանակը կը սահի իսլամական հանրապետութեան համար, որ պէտք է փաստէ, թէ կորիզային վէճերը չի պատրաստեր եւ պիտի չ'պատրաստէ:

Միջազգային գործակալութեան բանբերը՝ Մարք Կուրտեքի ըսաւ, որ ցարդ Իրանի իշխանութիւնները կարգ մը տեղեկութիւններ փոխանցած են եւ խոստացած են աւելին փոխանցել ապագային: Ան դիտել տուաւ սակայն, որ տեղեկութիւններուն փոխանցումը պահանջուած ու ակնկալուած արագութեամբ չ'ընթանար: Կուրտեքի աւելցուց, որ ամէնէն ուշը մինչեւ 31 Հոկտեմբեր, Իրան պէտք է գործակալութեան փոխանցած ըլլայ ամբողջական տեղեկութիւններ իր կորիզային ծրագիրներուն մասին:

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

•Over Bed Table
•All Kinds Of Oxygen
We Also Provide
•Laboratory service.
•Physiotherapist
•Nurses Aids
•P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՈՐԱՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԵԱՎ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԵ, Բ. ՅԱՐԿ ԵՏՆ. (021) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.